Հայաստանում չի գնահատվում այն, ինչ Ռուսաստանը տալիս էր: Հիմա կարծես սկսել են հասկանալ՝ երբ բերքը մնում է դաշտերում: Բայց ինչ կարող են անել սովորական մարդիկ: Ես ցավում եմ երկրիս համար: Երկիրս չպիտի մանրախնդիր, մանրապաշտ լինի: Իսկ Ռուսաստանը դերժավա է, քաղաքակրթություն է, դա ոչ ոք չի չեղարկել:

Կարդացեք՝ էջ 4

Պատմությունը ցույց է տալիս, որ Հայաստանի նման երկրներում ոչ մի իշխանություն չի կարող երկարաժամկետ հաջողություն ունենալ՝ փորձելով պատերազմ հայտարարել ազգային ինքնության հիմնական հաստատություններից մեկին, ինչպես Եկեղեցին չի կարող լիարժեք կատարել իր առաքելությունը՝ վերածվելով քաղաքական ընդդիմության:

Կարդացեք՝ էջ 6

Ես հույս ունեմ, որ ՍԴ-ն ընդդիմության ներկայացրած ծանրակշիռ եւ անհերքելի փաստերի ճնշման տակ կընդունի երեք որոշումներից մեկը. առաջին՝ «անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները», երկրորդ՝ «անվավեր ճանաչել եւ սահմանել մանդատների բաշխման կարգը», երրորդ՝ «նշանակել ընտրությունների երկրորդ փուլ»:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 105 (4240), 27 հունիս, շաբաթ, 2026

www.hraparak.am

Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները չնայած դեռ վիճարկման փուլում են, սակայն իշխանությունները համատարած հետընտրական հաշվեհարդար են սկսել: ՏԻՄ ղեկավարներին հրահանգ է իջեցվել՝ հայտնաբերել եւ պատժել պետական կառույցների բոլոր այն աշխատակիցներին, ղեկավարներին, որոնք ընտրություններից առաջ իշխանության լոբբինգով չեն զբաղվել, իշխանության օգտին չեն աշխատել կամ քվեարկել: Դիցուք, երեկ տեղեկացանք, որ «Սուրենավան բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անի Պողիկյանին Արարատի համայնքապետարանից կանչել են ու պարտադրել, որ աշխատանքից ազատման դիմում գրի: Բանն այն է, որ վերջինիս ամուսինը դաշնակցական է եւ ԱԺ ընտրությունների ժամանակ սատարել է «Հայաստան» դաշինքին: Մանկապարտեզի տնօրենն էլ, ըստ լուրերի, իշխանության համակիրը չէ եւ մասնավոր զրույցներում հայտնել է այդ մասին, ինչը հասել է համայնքային իշխանություններին, եւ որոշել են հաշվեհարդար տեսնել տնօրենի հետ: Պողիկյանն աշխատանքից ազատման դիմումը դեռեւս չի գրել, սակայն, մեր աղբյուրի փոխանցմամբ, ճնշումն այնքան մեծ է, որ չի կարող դիմադրել եւ առաջիկա օրերին, «սեփական» դիմումի համաձայն, կազատվի աշխատանքից: Վերջին օրերին տարբեր համայնքների դպրոցների ուսուցչական կոլեկտիվներից են մեզ ահազանգում, որ իրենց ստիպում են ազատման դիմումներ գրել: Փաստորեն, Նիկոլ Փաշինյանը որոշել է ողջ պետական ապարատը եւ պետական հիմնարկները ՔՊ-ականացնել եւ չհանդուրժել անգամ մեկ քվեի այլակարծություն:

Դեռացող Ազգային ժողովը հուլիսի 2-ին նիստ է հրավիրել, որի օրակարգում, նախնական տեղեկություններով, մի շարք աղմկահարույց նախագծեր են: Դրանցից մեկը պատգամավորական երդման տեքստի փոփոխության նախագիծն է, մյուսը արտերկրում գտնվող մեր հայրենակիցներին ընտրության իրավունքից զրկելու հակասահմանադրական նախագիծն է, ինչպես նաեւ՝ էթիկայի հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ նոր կարգավորումներն են: Այն պատգամավորները, որոնք տեղ չեն զբաղեցնելու հաջորդ խորհրդարանում, փաստորեն, հավասար պատասխանատվություն են կիսելու իրենց այն թիմակիցների հետ, որոնք առաջիկայում պատգամավոր են լինելու: Համատեղ ուժերով որոշել են երդման տեքստից ջնջել հայ ժողովրդի համազգային նպատակների վերաբերյալ արձանագրումը:

Մենք էլ ենք ձախողվել

Ինչո՞վ է այս՝ ՔՊ-ական իշխանությունը տարբերվում իր նախորդներից: Մեզ թվում էր, թե սրանք համեստ են, հղփացած չեն, կոռումպացված չեն: Եվ քանի որ ագահ չեն՝ չեն հղփանա, ձեռքը չեն մտցնի պետական գանձարանն ու հանրային միջոցները չեն յուրացնի: Մենք կարծում էինք՝ սրանք տենդերներ կազմակերպելիս, պաշտոններ բաժանելիս արդար կլինեն եւ իրենց յուրայիններին առաջ չեն մղի՝ դուրս թողնելով առավել արժանիներին: Մեզ թվում էր՝ սրանք երբեք ընտրություն չեն կեղծի, սպառողի ու քաղաքացու իրավունքները չեն ոտնահարի, ավելորդ հարկային բեռ ու չափից դուրս մեծ տուրքեր չեն սահմանի: Մեզ թվում էր, որ հանրային միջոցները ծախսելիս ամեն ինչ թափանցիկ կլինի, եւ հանրությունը կմասնակցի այդ հարցերի քննարկմանը, այսպես կոչված՝ ինքը կորոշի՝ ինչ կառուցել, ինչը նորոգել, ինչը թույլատրել, ինչն ապամոնտաժել եւ այլն: Մեզ թվում էր՝ բնության եւ էկոլոգիայի հանդեպ սրանք շատ ուշադիր կլինեն, չէ՞ որ շատերը նախկին բնապահպաններ են, քաղհասարակության ներկայացուցիչներ: Նաեւ վստահ էինք, որ յուրայինների հանցանքների վրա աչք չեն փակի, իրենց քննադատողներին բերդերում չեն փակի, քննադատական կարծիքը կհանդուրժեն: Համոզված էինք, որ պետական կառույցները, մշակութային եւ կրթական օջախները չեն քաղաքականացնի-կուսակցականացնի, այդ կառույցների ղեկավարներ նշանակելիս չեն առաջնորդվի յուրային տգետներին նշանակելու սկզբունքով: Մենք նաեւ մեծ հույսեր ունեինք, որ սրանք իրենց երկիրը, հողն ու ջուրը, պատմությունն ու մշակույթն ավելի շատ են սիրելու, եւ հայ ժողովրդի արժեհամակարգն ու ինքնությունը միայն շահելու են իրենց՝ իշխանության գալով: Ցավոք, ստիպված ենք արձանագրել, որ բոլոր կետերում սխալվել ենք, մեր սպասելիքները սրանք չեն արդարացրել, մեր վստահությունը չարաշահել են:

Նիկոլ Փաշինյանն առաջիկայում մամուլի նոր խոսնակ կունենա, քանի որ ներկայիս խոսնակ Նազելի Բաղդասարյանը ՔՊ պատգամավորության թեկնածուների կազմում է եւ տեղափոխվում է խորհրդարան՝ պատգամավորի կարգավիճակով: Բաղդասարյանը Փաշինյանի խոսնակ է նշանակվել 2023 թվականին՝ ազատվելով Շիրակի մարզպետի պաշտոնից, որտեղ նա գործուղվել էր դարձյալ խորհրդարանից: Նոր խոսնակը, ըստ որոշ լուրերի, «Քաղպայմանագիր» կուսակցության երիտասարդական կառույցի խորհրդի քարտուղար, 26-ամյա Մելանյա Հարությունյանն է, որը, ի դեպ, նախընտրական քարոզարշավի ողջ ընթացքում քայլել է Փաշինյանի հետ, իսկ կառավարությունում կայացած վերջին բրիֆինգի ժամանակ կանգնած էր լրագրողների հետեւի շարքում:

ՔՊ-ՈՒՄ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԿՈՒՎ է

ՔՊ-ում պաշտոնների բաշխման գործընթացը շարունակվում է, ԱԺ խոսնակի թեկնածուի ընտրությունից հետո պատրաստվում են ՔՊ վարչության նիստում փոխխոսնակներ ընտրել: Առաջադրումները սկսվել են նախօրեից, երեկվա դրությամբ 2 թեկնածու էր առաջադրվել՝ Վահագն Ալեքսանյանն ու Ալխաս Ղազարյանը: Այսօր առաջադրումների վերջին օրն է, թեկնածուներն էլեկտրոնային նամակով ուղարկում են իրենց հայտը, աշխատակազմը թեկնածությունները պետք է ներկայացնի վարչության քննությանը: Ըստ ամենայնի՝ եկող շաբաթ էլ ՔՊ վարչությունը կընտրի փոխնախագահների թեկնածուներին: Մեզ ասացին, որ կարծես թե քաղաքական որոշում կա, որ երկու փոխխոսնակներից մեկը կին լինի, այս պատճառով էլ ՔՊ գրեթե բոլոր կանայք ցանկանում են առաջադրվել: Ոմանք վստահ են, որ սա Նիկոլ Փաշինյանի հերթական թատրոնն է՝ ոչ մի ընտրություն էլ չկա, ինքն է որոշողը: Մյուսները պնդում են, որ որոշ դեպքերում ընտրվողները Նիկոլի սրտով չեն՝ նա չէր ուզենա, որ նրանք ընտրվեին:

ՄՐՑՈՒՅԹ

ՈՎՔԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿՈՂՆԵՐԸ

Այիսի վերջին դատական դեպարտամենտը մրցույթ էր հայտարարել՝ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի 3 ոչ դատավոր անդամների ընտրության համար: Երեկ հայտնի դարձավ, որ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի 8 թեկնածուից մեկը՝ թոշակի անցած դատավոր Արթուր Մկրտչյանը, որն առաջադրվել էր Սիրանուշ Սահակյանի «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից, հանել է թեկնածությունը:

Արթուր Մկրտչյանը մի շարք աղմկահարույց գործեր է քննել: Նա կայացրել էր Հաց բերողի երկրորդ կալանքի որոշումը: Ի դեպ, ներկայում Հաց բերողի՝ Արթուր Սարգսյանի վերաբերյալ դիմումը քննվում է ՄԻԵԴ-ում, եւ եթե այն բավարարվի, իսկ Արթուր Մկրտչյանը մնար թեկնածուների կազմում, ապա կստացվեր, որ մարդու իրավունքների խախտումներ կատարած դատավորը որոշում է այլ դատավորներին կարգապահական պատասխանատվության հարուցման հարցերը: Նա քննել է նաեւ ՊԵԿ նախկին նախագահ, ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի եւ նրա եղբորորդու վերաբերյալ քրեական գործը, սակայն ավարտին չի հասցրել: 2018 թվականին բավարարել է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանավորելու վերաբերյալ ՀՔԾ միջնորդությունը, խափանման միջոցներ է քննարկել Մանվել Գրիգորյանի եւ նրա կնոջ գործերով: Հավանաբար, կանխատեսելով մեղադրանքները, նա որոշել է «մեղքից հեռու», ինչպես ասում են՝ հանել թեկնածությունը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Հիշեցնենք. Դատավորների ընդհանուր ժողովը դատավորների էթիկայի հանձնաժողովի ոչ դատավոր անդամներին ընտրելու է հուլիսի 3-ին: Նախկինում այն կազմված էր 6 դատավոր եւ 2 ոչ դատավոր անդամից, բայց քաղհասարակության պահանջով ոչ դատավոր անդամների թիվն ավելացավ երեքով:

Իշխանությունն իր այս քայլը բացատրում էր դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներն ավելի թափանցիկ ու վերահսկելի դարձնելու, «դատական կորպորատիվիզմին» վերջ տալու անհրաժեշտությամբ, իսկ ընդդիմությունն այստեղ քաղաքական միջամտության փորձ տեսավ:

Բայց այս պահին ինտրիգն այն է, որ ոչ դատավոր անդամների տեղերը փորձում են զբաղեցնել գործող դատավորների տարբեր ազգականներ, պաշտոնաթող դատավորներ եւ դատական համակարգի հետ փոխկապակցված անձինք, որոնք առաջադրվում են հասարակական կազմակերպությունների կողմից, իսկ քաղհասարակության ներկայացուցիչները համարում են, որ այս անձինք «ուզուրպացնում» են իրենց տեղերը:

Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի նախկին դատավոր Արմինե Թումասյանը եւս թեկնածուների թվում է: Նա դատավոր է նշանակվել 2023-ին եւ հրաժարականի դիմում է ներկայացրել մոտ 1 տարի առաջ: Թումասյանի հրաժարականի վերաբերյալ ԲԴԽ օգոստոսի 4-ի որոշումից հետեւում է, որ պատճառը գերծանրաբեռնվածությունն է եղել, որին նա, փաստորեն, չի դիմացել: Մամուլում մի պահ շրջանառվեց, որ նրա դեմ կարգապահական վարույթ էր հասունանում, եւ այդ պատճառով է նա հրաժարվել դատավորի պաշտոնից: Հասկանալի չէ, թե այս պարագայում ինչպես նա պետք է գնահատի նմանատիպ ծանրաբեռնվածությամբ աշխատող դատավորներին: Բայց ամենատարօրինակ հանգամանքն այս դեպքում սա չէ, այլ՝ այն, որ Արմինե Թումասյանը, որը 2018-2023 թվականներին ԲԴԽ-ում է աշխատել, զբաղեցնելով Իրավական ակտերի մշակման եւ փորձաքննության վարչության Բարձրագույն դատական խորհրդի նիստերի նախապատրաստման եւ որոշումների նախագծերի մշակման բաժնի պետի պաշտոնը, գրում է էթիկայի հանձնաժողովի կարգերը: Նրա անունն է նշված «ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության կարգը» փաստաթղթի տակ, այսինքն՝ հենց այն հանձնաժողովի, որի անդամ է փորձում դառնալ այս կինը: Տրամաբանական կասկած է առաջանում, որ ոչ դատավոր անդամի տեղը նրան նախապես խոստացված է: Չի բացառվում, որ հենց ԲԴԽ-ից էլ նրան առաջ են տանում:

Թեկնածուների թվում տեսնում ենք Մելիք Մելիքյանին, որը վճռաբեկ դատարանի աշխատակից է, նաեւ՝ ոստիկանության կրթահամալիրի աշխատակից Արտակ Մալխասյանին, որը ոչ մի կապ չունի ոչ իրավապաշտպանության, ոչ դատական համակարգի հետ: Թեկնածուներ են առաջադրել նաեւ «Հանուն իրավահավասարության» իրավապաշտպան կազմակերպությունը, որի ղեկավարը նաեւ այլ ՀԿ-ներով հայտնի Մանուշ Մարալչյանն է: Նա երբեւիցե հանդես չի եկել իշխանության կոշտ քննադատությամբ, եւ հաճախ Մարալչյանի ղեկավարած ՀԿ-ները ներգրավված են եղել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ծրագրերում: Նույնը կարելի է ասել «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կոմիտե», «Իրավունքի Եվրոպա միավորում», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ների մասին:

7 դիմում, 70 շահ ու խնդիր

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընտրությունների արդյունքների վիճարկման գործով առաջին նիստի ընթացքում հայտարարել է, որ դատարանն ունի սահմանափակ ժամկետ՝ որոշում կայացնելու համար, ընդհանուր առմամբ՝ 8 օր, հաշվարկը սկսած այսօրվանից: Դա է օրենքի պահանջը: Նա նշել է, որ հուլիսի 4-ը վերջնաժամկետն է, երբ պետք է հրապարակվի վերջնական որոշումը: Այդ պատճառով դատարանը նախատեսում է աշխատել նաեւ շաբաթ օրը, կիրակի օրը նիստ անցկացնելու հնարավորությունը եւս չի բացառվում: Սահմանադրական դատարանը երեկ մերժել է ԲՀԿ ներկայացուցիչ Արամ Օրբելյանի միջնորդությունը՝ ընտրությունների արդյունքների գործն ամբողջական կազմով քննելու վերաբերյալ: Հիշեցնենք, որ ՍԴ-ն այս գործը քննում է առանց 2 դատավորի՝ Արտակ Զեյնալյանի եւ Վլադիմիր Վարդանյանի, որոնք կողմերի հետ սերտ առնչություններ են ունեցել, եւ նրանց մասնակցությունը կապալեգիտիմացնի դատարանի որոշումը: ՍԴ նախագահ Արման Դիլանյանը պատասխանել է, որ դատարանը որոշումը կայացրել է ոչ հեշտությամբ: «Թող ձեզ չթվա, որ մենք թեթեւ սրտով ենք բաժանվել մեր գործընկերներից, մենք շատ ծանր սրտով ենք անհնարինություն հայտնել մեր գործընկերներին, բայց կշեռքի վրա դրված էր հետեւյալ հարցը. կամ մենք քննում ենք ոչ լիարժեք կազմով, կամ քննում ենք դատարանի լեգիտիմության հետ կապված մտահոգություններով: Իրավական ու ժողովրդավարական պետությունում պահանջվում է, որ առաջնահերթությունը տրվի միշտ առաջինին»,- ասել է նա:

ԱՐԴԵՆ ԵՐԱՆԻ ԵՆՔ ՏԱԼԻՍ ՆԱԽՈՐԴԻՆ, ՈՐԸ ՆՈՂԿԱԼԻ ԷՐ

«Բաղպայմանագրի» վարչության նիստում, չսպասելով Սահմանադրական դատարանի որոշմանը, ԱԺ նախագահի թեկնածու են ընտրել ԱԺ նախկին փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանին: Այս մասին ՔՊ վարչության նիստից հետո լրագրողներին հայտնել է Նիկոլ Փաշինյանը: Լրագրողների հետ զրույցում Ռուբեն Ռուբինյանն էլ շեշտել է. «Շոյված եմ արդյունքից, եւ վստահությունն ինձ համար շատ պարտավորեցնող է: Չեմ կարող ասել, որ ինչ-որ բան պետք է ավելի լավ անեմ, քան նախորդ նախագահը կամ մյուս թեկնածուները: Ես կարծում եմ, որ պարոն Սիմոնյանը շատ լավ Ազգային ժողովի նախագահ է եղել, եւ պարոն Կոնջորյանը փայլուն խմբակցության ղեկավար է եղել»:

ԱԺ նախագահի աթոռի համար պայքարում էր 3 թեկնածու՝ գործող խորհրդարանի խոսնակ Ալեն Սիմոնյանը, փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը եւ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Հաջորդիվ որոշում են կայացնելու ԱԺ փոխխոսնակների հետ կապված՝ նրանք եւս առաջադրվելու են եւ ՔՊ վարչությունում նույն ընթացակարգով ընտրվելու են:

Հայ-թուրքական բանակցություններում Հայաստանի բանագնաց Ռուբեն Ռուբինյանին արդեն իսկ շնորհավորել է նրա թուրք գործընկերը՝ Սերդար Քըլըչը: Թեեւ նա դեռ ԱԺ նախագահ չէ, եւ զուտ ֆորմալ առումով շնորհավորելու ոչինչ չկա: Նկատենք, որ Ազգային ժողովի նախագահի ընտրությունը կազմակերպվում է նորընտիր խորհրդարանի առաջին նստաշրջանի ընթացքում, թեկնածու կարող են առաջադրել բոլոր խմբակցությունները: Խոսնակն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, ունենում է երեք տեղակալ, որոնցից մեկը՝ ընդդիմության կազմից:

Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքում ԿԸՀ-ն հայտարարեց, որ խորհրդարան են անցել ՔՊ-ն, «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները, բայց վերջին խոսքը Սահմանադրական դատարանինն է, որտեղ վիճարկվում է նաեւ ԲՀԿ-ի հարցը: Սրան զուգահեռ, դեռ անպատասխան է գլխավոր հարցը՝ արդյոք ընդդիմադիրները կվերցնե՞ն իրենց մանդատները: Ամեն դեպքում, իշխանական թիմից արդեն հնչում են զգուշացումներ, թե ընդդիմադիրներին խորհրդարանում «քաղաքականապես ոչնչացնելու են»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ազգային ժողովը տարեցտարի գահավիժում է: Ամեն անգամ մեզ թվում է, որ սրանից ավելի վատ կազմ դժվար է պատկերացնել, բայց արի ու տես, որ ամեն անգամ Նիկոլ Փաշինյանը հասարակությանը զարմացնում է յուրովի: Վահագն Ալեքսանյանի նման անմակարդակ ԱԺ փոխխոսնակ, Ռուբեն Ռուբինյանի նման կարմիր գծեր չունեցող ու «քուչի» մակարդակի ԱԺ նախագահ, ինչ խոսք, անկախությունից հետո ընկած ողջ ժամանակաշրջանում մենք երբեք չենք ունեցել: Անգամ քաղաքացու երեսին թքող Ալեն Սիմոնյանն այս աստիճան վատ տարբերակ չէր:

ԱԺ նախկին պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով այս ընտրությանը, նկատեց. «Տպավորություն ունեմ, որ մենք հայտնվել ենք մի շատ վատ շրջապտույտի մեջ եւ ամեն անգամ երանի ենք տալիս նախորդին, որը նողկալի էր: Ես չեմ նախանձում այս ընդդիմությանը, որը, բնականաբար, վերցնելու է մանդատները եւ գնալու է խորհրդարան: Ես ուղղակի ցավում եմ այն քաղաքացիների համար, ովքեր գնացել են ընտրության, քվեարկել են հանուն փոփոխության եւ առաջիկայում տեսնելու են դաբլ այլանդակություն: Ազգային ժողովի ղեկավար կազմում են ընտրվում մարդիկ, ովքեր ամենանողկալի որակումներն են տվել ընդդիմադիրներին: Նույն Ռուբեն Ռուբինյանը հայտարարում էր, որ սպասում է ընդդիմությանը, որին վերաբերվելու է որպես հանցագործների: Չգիտեմ, թե ինչ է պատրաստվում անել ընդդիմությունը, սակայն երբ նայում եմ ցուցակները, ինձ մոտ մեծ մտավախություններ են առաջանում: Սա չի լինելու խորհրդարան, լինելու է մեկ քաղաքական ուժի «բոյեվիկ» ներկայացումների թատերաբեմ: Ի դեպ, լրատվամիջոցները եւս կանգնելու են լրջագույն սանկցիաների առաջ՝ խորհրդարանական աշխատանքները լուսաբանելիս: Դա արդեն իսկ տեսանելի է»:

Փաշինյանին ձեռնտու են նոր ընտրությունների մասին լուրերը

ՍԴ դիմելն անիմաստ համարող քաղաքացիների վերաբերմունքը հասկանալի է: Նրանք կարծում են, որ ընտրությունների արդյունքները խեղաթյուրված են ներկայացվել ԿԸՀ-ի կողմից, եւ գտնում են, որ Սահմանադրական դատարանն ընդամենը հաստատելու է դրանք՝ «շունը շան թաթ չի կծի» ասացվածքի տրամաբանությամբ: «Հրապարակի» հետ զրույցում այս կարծիքը հայտնեց Արցախի Հանրապետության նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանը**:

«Գուցե անմիջապես փողոցային պայքարի դուրս գալն են ելք համարում եւ պատրաստ են ապստամբության: Ստեղծված իրավիճակում, սակայն, ինքնաբուխ ապստամբության չգնացին այդ մարդիկ, իսկ ընդդիմադիր առաջնորդներն էլ նախընտրեցին գնալ խաղաղ, իրավական գործիքակազմի կիրառում նախատեսող ճանապարհով»,- նշում է Մելիքյանը: Ինչ վերաբերում է ակտիվ քննարկումների առարկա դարձած՝ մանդատ վերցնել-չվերցնելու հարցին, նախկին արտգործնախարարը նշում է, որ ընտրողները ձայն են տվել այս կամ այն կոնկրետ վարչապետի թեկնածուին, բնականաբար, եթե իրենց նախընտրած թեկնածուն վարչապետ դառնալու հնարավորությունից զրկվել է, ապա մնացյալը դատարկ ճամարտակություն է համարվում:

Խոսելով Փաշինյանի՝ բռնաճնշումների քաղաքականության մասին, նա շեշտում է, որ Փաշինյանն արտաքին բացառիկ աջակցություն ունի, որն իրեն թույլ կտա գործի դնել ձեռքի տակ եղած ողջ ուժային, իրավական, տեղեկատվական զինանոցը՝ հնարավոր դժգոհություններն ու դիմադրության փորձերը ճնշելու համար: «Համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ ձեւավորելու միջոցով նա կձգտի կանխել փողոցային բողոքի պոռթկումները, սակայն եթե դրանք այնուամենայնիվ տեղի ունենան, առանց վարանելու կճնշի՝ ուժային կառույցները գործի դնելու միջոցով: Այդ մարտավարությունը, անշուշտ, արդյունավետ կլինի նաեւ այն պատճառով, որ ընդդիմադիր առաջնորդներն ուժին ուժով հակազդելու իրական ցանկություն եւ պոտենցիալ կարծես չեն դրսեւորում: Ակտիվ դիմադրություն ցույց տալու համար էլ պահը, իմ կարծիքով, կորսված է»,- շեշտում է զրուցակիցս: Ինչ վերաբերում է արտահերթ ընտրությունների հավանականությանը, ապա այդ խոսակցությունները, Մելիքյանի կարծիքով, օգտակար են գործող իշխանությանը: «Մի կողմից, դրանց հավանական լինելը հոգեբանական նախադրյալներ է ձեւավորում հունիսի 7-ի արդյունքների հետ «ժամանակավորապես» համակերպվելու եւ նոր զարգացումներին համբերատար սպասելու համար, մյուս կողմից էլ Փաշինյանի ձեռքերն են ազատ մնում՝ ցանկացած պահի ներքաղաքական նոր, ավելի նախընտրելի ստատուս քվո ձեւավորելու համար»,- շեշտում է նա: Մելիքյանը կարծում է, որ Կրեմլի ընդգծված հականիկոլականությունն իրականում Փաշինյանին աջակցելու ձեւ է՝ գիտեն, որ Արցախի հանձնումը հակառուսական տրամադրությունները սրեց Հայաստանում, իսկ ընդդիմադիրների պրոռուսական դիրքորոշումը կամ ընդգծված ռուսամետությունը հարվածեց հենց ընդդիմությանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՊԱՇՏՈՆ

ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿՂԵԿԱՎԱՐՎԻ ԹՈՒՐՔԻԱՅԻ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Նախօրեին ՔՊ վարչության փակ-գաղտնի քվեարկությամբ Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ընտրության արդյունքները շոկային են եղել ոչ միայն գործող նախագահ Ալեն Սիմոնյանի համար, այլեւ նրա թիմակիցների, ովքեր գրեթե հարյուր տոկոսով վստահ էին, որ նա է նորից ԱԺ նախագահի աթոռին բազմելու, քանի որ վայելում է Փաշինյանի աջակցությունն ու համակրանքը: Մինչդեռ, ինչպես տեսանք, ՔՊ վարչությունում անցկացված ընտրությունների արդյունքում ամենաշատ ձայն ստացավ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը: Ասում են՝ նա 12 ձայն է ստացել, իսկ Ալեն Սիմոնյանի օգտին վարչության 20 անդամից ընդամենը 5-ն է կողմ եղել, երրորդ թեկնածուն ՔՊ խմբակցության ղեկավար, ճամբարափոխ Հայկ Կոնջորյանն էր:

ՔՊ ֆրակցիայում, մինչ վարչության նիստի նախօրեն, կասկած չեն ունեցել, որ Ալեն Սիմոնյանն է շարունակելու լինել ԱԺ նախագահը, նախ՝ որ դա տեսանելի էր իր եւ Փաշինյանի ջերմ շփումներից, երկրորդ՝ ինքն էլ էր բոլորին հավաստիացրել, որ շեֆն իրեն «դաբրո է տվել»: Ավելին, մեր աղբյուրները պատմում են, որ իր՝ կրկին առաջադրվելու մասին Սիմոնյանը նախապես զրուցել է Փաշինյանի հետ, առարկություն չի ստացել, նախընտրական քարոզարշավի ողջ ընթացքում էլ Փաշինյանն ու Սիմոնյանն «ուրախ ավտոբուսի» առաջին նստարանի անբաժան զույգն էին, եւ պեռաշկի ու կուկուռուզ ուտելու տեսարանների պատճառով Սիմոնյանին ամենից շատն էին թիրախավորում, բայց վերջին պահին իրավիճակը փոխվել է, կամ էլ Փաշինյանն իրեն բնորոշ ոճով նենգ խաղ է խաղացել՝ ԱԺ խոսնակի գլխի տակ փափուկ բարձ դնելով, տակից ուրիշ խաղ խաղալով:

Ի դեպ, ի սկզբանե որոշված է եղել, որ խորհրդարանի խոսնակի թեկնածուի ընտրությունները ՔՊ վարչությունում անցկացնելու են բաց քվեարկությամբ, առաջարկն էլ վարչության վերջին նիստերից մեկում անձամբ Փաշինյանն է արել, ոչ մեկը դեմ չի եղել, սակայն քվեարկության նախորդ օրը ՔՊ աշխատակազմից վարչության անդամներին ծանուցել են փակ քվեարկության անցկացման մասին, իբրեւ թե ինչ-որ մարդիկ նման առաջարկով են հանդես եկել, եւ դա տարօրինակ է թվացել առաջին հերթին Ալեն Սիմոնյանին, իսկ արդեն քվեարկության արդյունքներն իմանալուց հետո նա հասկացել է, որ վատ խաղ խաղացին իր գլխին: Ընտրությունից անմիջապես հետո նա արագ հեռացել է կուսակցության գրասենյակից: Իհարկե, մեկ օր անց՝ հաջորդ օրը, կեսօրին Ալեն Սիմոնյանն իր էջում շնորհավորեց Ռուբեն Ռուբինյանին, բայց նա դժվար թե չհասկանա, որ համալրում է Նիկոլ Փաշինյանի կողմից օգտագործված ու դեն շպրտվածների շարքերը, որն արդեն ստվար թիվ է կազմում:

Մեր աղբյուրներն ասում են՝ այնպես չէ, որ ՔՊ-ում շատ գոհ են Ռուբեն Ռուբինյանի ընտրության փաստից, նա թիմում ոչ ճշտապահ, անհավասարակշիռ, անկառավարելի, չար մարդու համբավ ունի, եւ շատերը վստահ են, որ ԱԺ նախագահի ծանրաձողը շուտով նա գցելու է ոտքին՝ առաջին իսկ հարմար առիթով խորհրդարանի դահլիճում «դեբոշներ» են ծագելու, քննարկումները վերածվելու են «ռազբիրատների», չեն կարողանալու օրենքներ ընդունել, մանավանդ՝ ՔՊ-ի մանդատների քանակը նվազել է, եւ խորհրդարանի վարկանիշը հանրության աչքում էլ ավելի է նվազելու: ՔՊ-ում կասկածներ ունեն, որ Ռուբինյանի ընտրությունը հրահանգված է դրսից, եւ դրանով է նաեւ բացատրվում Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման հարցերով Թուրքիայի հատուկ ներկայացուցիչ Սերդար Քըլըչի արագ շնորհավորանքը, երբ ընդամենը կուսակցական օրգանը երաշխավորել է Ռուբինյանի թեկնածությունը: Ստացվում է, որ ՀՀ իշխանությունը կառավարվում է թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից, կառավարությունում Ալիեւի կամակատարն է իշխելու, խորհրդարանում՝ Թուրքիայի:

Իհարկե, այլ կարծիքներ էլ կան, որ Նիկոլ Փաշինյանը չէր հանդուրժելու Սիմոնյանին, որ վաղուց պարզ էր, որ Փաշինյանը չեզոքացնելու է Սիմոնյանին, քանի որ նրա թքելու պատմությունը եւ անձնական կյանքի վայրիվերումները նրան դուր չեն գալիս, եւ պատահական չէր, որ ՔՊ ցուցակը կազմելիս Ալեն Սիմոնյանը հայտնվել էր հետին հորիզոնականներում՝ նա 14-րդն էր, համեմատության համար նշենք, որ Ռուբինյանը՝ 7-րդ, իսկ Կոնջորյանը 11-րդն էին: Բայց Ալեն Սիմոնյանն այս տարիներին լավ կապեր էր ստեղծել աշխարհի տարբեր երկրների խորհրդարանների ղեկավարների հետ, ներկայանալի տեսք ուներ եւ կարողանում էր տիրապետել խորհրդարանին, իսկ Քըլըչի գործընկերը, չնայած շատ լավ թուրքերեն է խոսում, բայց ԱԺ խոսնակ դառնալու համար երկար ճանապարհ ունի անցնելու: Մեծ հաշվով, Փաշինյանին ճանաչողներն ասում են, որ երբեք չի կարելի կանխատեսել, թե նա այդ օրն ինչ որոշում կկայացնի՝ դա կախված է այդ օրվա նրա տրամադրությունից, էմոցիոնալ բռնկումներից եւ կուլիսային շփումներից, որից հանրությունը տեղեկացված չէ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄԻՊ-Ը ՇԱՏ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԻՊ Անահիտ Մանասյանը, անդրադառնալով համատարած կալանավորումներին, նշել է, որ կալանքից բացի այլ խափանման միջոցներ էլ պետք է կիրառվեն, եւ շեշտել է իր մասնակցությունը 2 գործով կալանքի վերացմանը՝ Արտուր Օսիպյանի եւ Դավիթ Մինասյանի: Բայց Հայաստանում կան բազմաթիվ քաղբանտարկյալներ՝ Անդրանիկ Թեւանյան, Ավետիք Չալաբյան, Ալիկ Ալեքսանյան, Խաչիկ Գալստյան, Արթուր Ավանեսյան, Արթուր Սարգսյան, Արմեն Աշոտյան եւ այլք, ոչ մեկի մասին նա չի խոսում, անդրադառնում է այլ հարցերի՝ հաշմանդամների իրավունքներին, ատելության խոսքին՝ անշառ թեմաների: ՀՀ առաջին օմբուդսմեն, իրավապաշտպան **Լարիսա Ալավերդյանն** ասում է. «Արդեն ինչքան ժամանակ է՝ նշվում է, որ ՄԻՊ-ը, ժողովրդական լեզվով ասած, կեսբերան է անդրադառնում կարեւոր հարցերին, բայց դա թուլացնում է թե՛ այդ հաստատության դերը, թե՛ Հայաստանի Հանրապետության իմիջը: Ես չեմ խոսում Եվրամիության կամ Եվրոպական խորհրդի նման թունավորված քաղաքական մարմինների մասին, խոսում եմ այն մասին, որ միջազգային հանրության մեջ կան այնպիսի հաստատություններ, որոնք այս երեւույթներն անպայմանորեն դատապարտում են: Ես կարող եմ բերել Արման Թաթոյանի ՄԻՊ եղած ժամանակաշրջանի օրինակը: Այն ժամանակ Հայաստանն առաջնային հորիզոնականներ էր զբաղեցնում: Թաթոյանը խոսում էր կոռեկտ իրավաբանական լեզվով, խոսում էր Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների զանգվածային խախտումների մասին, մասնավորապես՝ Արցախի հայերի: Այսօր փաստացի ունենք շատ ավելի վտանգավոր ու վատ իրավիճակ, ՄԻՊ-ի ավելորդ զսպվածությունն ու մեղմ անդրադարձները վնասում են առաջին հերթին իշխանություններին: Մատնանշում է Արտուր Օսիպյանի հետ տեղի ունեցած գռեհիկ, տհաճ դեպքը, դե, ինչպես ասում են, շնորհավորում եմ ՄԻՊ Անահիտ Մանասյանին, որ գոնե այդ հարցին համարձակություն է ունեցել անդրադառնալու: ՄԻՊ-ը բավականին շատ աշխատանք ունի կատարելու, մարդու իրավունքների պաշտպանն ու իր թիմը պարտավոր են անդրադառնալ մի շարք կարեւոր հարցերի: Օրինակ՝ հոգեւորականների հանդեպ հետապնդումներին, մեզ աշխարհում արդեն նայում են որպես խիստ հետամնաց պետության: Նրանք, ովքեր կարդացել են Հայոց պատմություն, ծանոթ են մեր մշակույթին, մեզ որպես քաղաքակիրթ քրիստոնյա ժողովուրդ են համարում, բայց այն, ինչ տեղի է ունենում եկեղեցականների հանդեպ, աշխարհի ամենահետամնաց երկրներում անգամ նման բան չես գտնի: Անդրանիկ Թեւանյանին մեղադրում են դավաճանության մեջ: Կամ Ավետիք Չալաբյանն ի՞նչ է արել: Փոխարենը՝ իշխանությունների գործողություններում կան տարբեր ծանր հանցանքի հատկանիշներ, եւ դեռ հարց է, թե ում գործողություններն են հանրության կողմից բնորոշվում որպես դավաճանական: Մենք տեսնում ենք, թե ովքեր ինչով են զբաղված: Ի վերջո Անահիտ Մանասյանը գրագետ իրավաբան է, այդպես են ասում, արժե՞ այդքան անտեսել այս սարսափելի գործընթացները»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴՄ

«ԵՍ ՑԱՎՈՒՄ ԵՄ ԵՐԿՐԻՍ ՀԱՄԱՐ, ԵՐԿԻՐՍ ՉՊԻՏԻ ՄԱՆՐԱԽՆԴԻՐ, ՄԱՆՐԱՊԱՇՏ ԼԻՆԻ»



Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Հայաստանի եւ Ռուսաստանի իշխանությունները փոխադարձ թշնամանքի խորացման ճանապարհին են բռնել: Հայտարարություններ եւ գործողություններ են ձեռնարկում միմյանց դեմ: Հանրությունը եւս լարված է: Մի կողմից սրվում են հակառուսական տրամադրությունները, մյուս կողմում, որը դեռ հավատում է ռուսին ու մեղադրում Փաշինյանին, հուսահատված են: Խոսքը հատկապես գյուղատնտեսությամբ ապրողների մասին է: Եվ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանի նվերը ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսին՝ 7 ծիրանի տեսքով, եւ Եվրոպա գնացած ծիրանի առաջին խմբաքանակի մասին լուրերը չեն փրկում, որովհետեւ գյուղացու բերքը մնացել է ծառերին: Ֆուռերը մեր գյուղեր չեն մտնում՝ ո՛չ Եվրոպա, ո՛չ էլ Ռուսաստան գնացող: Կառավարության վերջին նիստի ժամանակ Նիկոլ Փաշինյանը, հավանաբար, զգալով մոտալուտ խուճապը, անդրադարձավ հայկական ապրանքների արտահանման խնդրին: Ասաց, որ ԵԱՏՄ-ում այս հարցի շուրջ լուրջ քննարկման անհրաժեշտություն կա, բայց կրկին կոշտ հայտարարություն արեց. «Պետք է հասկանանք՝ Եվրասիական տնտեսական միության ցանկացած երկիր ցանկացած երկրի հետ կապված կարո՞ղ է այսպիսի որոշումներ կայացնել, թե՞ ոչ: Եթե այս հարցի պատասխանն «այո» է, ապա Եվրասիական տնտեսական միությունը հայտարարում է ինքնալուծարման մասին, եւ մենք պետք է այստեղից հետեւություններ անենք»: Հիշեցնենք. մայիսի 29-ին ԵԱՏՄ 4 երկիր հայտարարություն էր ստորագրել այն մասին, որ Հայաստանը պետք է հնարավորինս արագ հանրաքվե անցկացնի՝ ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ ընտրություն կատարելու հարցով: Դեռ ընտրություններից առաջ, Մարտունիում Նիկոլը խոստացել էր մեկնել Մոսկվա ու լուծել հարցերը, ասել էր, որ չի պատրաստվում լեզվակռվի մեջ մտնել Ռուսաստանի հետ, բայց լեզվակռիվը շարունակվում է:

Պետերբուրգում ընթացող միջազգային ֆորումի ժամանակ Ռուսաստանի անվտանգության խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեդվեդեւը Հայաստանին մեղադրել է տարածաշրջանում ՆԱՏՕ-ին եւ ընդհանուր առմամբ Արեւմուտքին աջակցելու մեջ՝ ակնարկելով, որ Հայաստանում խամաճիկ ռեժիմ է տիրում: «Մեր երկրի հետ գործընկերության ձգտման մասին գեղեցիկ խոսքերի քողի տակ ՆԱՏՕ-ն գործնականում մոտեցել է մեր սահմաններին: Որպես գործիք՝ դաշինքն օգտագործում է խամաճիկ ռեժիմներ: Այդպես եղավ Վրաստանի հետ, այդպես եղավ Ուկրաինայի հետ, որը 14-ին վերածվեց ռուսատյացության օջախի: Ցավոք, դա է հիմա տեղի ունենում Մոլդովայի եւ նույնիսկ, ավաղ, Հայաստանի հետ»,- հայտարարել է նա:

Իսկ Russia Today հոլդինգի ղեկավար Մարգարիտա Սիմոնյանը նույնիսկ առաջարկում է արգելել Նիկոլի կողմնակիցների մուտքը Ռուսաստան: Սա պատասխան քայլ է. ինքը՝ Մարգարիտան, ԱՊՀ գործերի հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինը, մեդիամագնատ Արամ Գաբրիելյանովը, «Ռոսստրուդնիչեստվո»-ի նախկին ղեկավար եւ Ռուս-հայկական բարեկամության ընկերության նախագահ Վիկտոր Կրիվոպուսկովը, քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանն արդեն հայկական սեւ ցուցակներում են՝ նրանց մուտքը Հայաստան արգելված է: Ի՞նչ է սա՝ ՌԴ պաշտոնական քաղաքականությո՞ւն, թե՞ պուտինյան մեդիագործչի էմոցիոնալ քարոզչություն, եւ ո՞ւր է հասնելու ձնագնդիի նման օր-օրի մեծացող թշնամանքը, կարելի՞ է ասել, որ Հայաստանը Ռուսաստանի համար արդեն թշնամական տարածք է, որի անվտանգությանը նա սպառնում է, խոսքը նաեւ տնտեսական անվտանգության մասին է:

Ռուսաստանցի փորձագետ, մեր հայրենակից **Կարինե Գեւորգյանը** ցավով է անդրադառնում այս հարցերին: Նա յուրահատուկ, «հայկական» հայացք ունի, թեեւ ռուսական քաղաքակրթության մաս է: «Սպասեք՝ այդ ամենը քարոզչություն է, պուբլիցիստիկա, գնահատողական դիրքորոշումներ: Տանգոյի համար երկուսն են պետք, եւ քննարկել հարցը, թե ով է մեղավոր՝ Փաշինյանը, թե Ռուսաստանը, ես չեմ պատրաստվում: Դա տարօրինակ է: Հետխորհրդային տարածքում ռուսական քաղաքականությունն ամբողջությամբ տապալված է: Արդյունքն Ուկրաինան է, արդյունքն այն է, որ Միջին Ասիայի երկրներն այնպիսի բաներ են անում, որ Փաշինյանը երազում չի տեսել, իսկ ռուսական քարոզչությունը պատմում է այն մասին, թե ինչ դավաճան է Փաշինյանը եւ ինչ վայրենի ստահակ: Ես նրա կողմնակիցը չեմ, չեմ ճանաչում նրան, չունեմ նրա նկատմամբ անձնական որեւէ վերաբերմունք: Ես հիմա խոսում եմ գործառույթի մասին: Բայց այն, որ ռուսական քարոզչությունը չի ուզում տեսնել, թե ինչ է կատարվում Միջին Ասիայում, իսկ նրանք վաղուց են արդեն քայլում այն ճանապարհով, որի վրա Փաշինյանը նորոնոր է կանգնում»,- ասում է Կարինե Գեւորգյանը:

Ըստ նրա, եւ նա այս մասին բազմիցս է նշել իր ելույթներում, տարածաշրջանի երկրները (հատկապես Ղազախստանն ու Ուզբեկստանը) փորձում են միաժամանակ մանեւրել Ռուսաստանի, Չինաստանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ: Փորձագետը նախազգուշացնում է, որ «2 կամ 3 աթոռի նստելու» փորձերը կարող են հանգեցնել տարածաշրջանի անկայունացմանը, քանի որ Արեւմուտքն այս երկրներն օգտագործում է Ռուսաստանի եւ Իրանի դեմ պլացդարմ ստեղծելու համար, իսկ Ռուսաստանը դա չի տեսնում:

«Ինձ շատ հայեր են դիմում, նրանք գուցեեւ չեն կարողանում ճիշտ ձեւակերպել, բայց սա զգում են: Եվ սա տեղի է ունենում ռուսական դաշտում: Քանի դեռ Ռուսաստանը չի դադարեցրել իր այս գործելակերպը՝ «ես ձեր գազը կանջատեմ, ես ձեզ սա կանեմ, նա կանեմ», ոչ մի բան չի փոխվի դեպի լավը»,- ասում է փորձագետը:

Միաժամանակ նշում է, որ Ռուսաստանի կողմից էլ է դրական վերաբերմունք եղել, Ռուսաստանը շատ բան է արել Հայաստանի համար, որը չի գնահատվել: «Դա եղել է, եւ երբ որ ամեն ինչ լավ է, դու դա չես նկատում»,- ասում է Գեւորգյանը: Նա բերում է իր մեծ շան օրինակը, որն 90-ականներին, երբ չկար ոչինչ, թալանչիներից տան միակ պաշտպանությունն ապահովողն էր: «Ճիշտ այդպես էլ Հայաստանում չի գնահատվում այն, ինչը որ Ռուսաստանը տալիս էր:

Հիմա կարծես սկսել են հասկանալ. երբ բերքը մնում է դաշտերում, ոչ ոք չի գալիս, որ տանի Ռուսաստան, գյուղացիները տխուր են: Բայց ի՞նչ կարող են անել սովորական մարդիկ՝ ասում եմ: Ես ցավում եմ երկրիս համար: Երկիրս չպիտի մանրախնդիր, մանրապաշտ լինի: Իսկ Ռուսաստանը դերժավա է, քաղաքակրթություն է, դա ոչ ոք չի չեղարկել»: Հարցնում եմ. «Բայց Մեդվեդեւը Հայաստանը համեմատեց խամաճիկ երկրների հետ՝ Ուկրաինայի, Մոլդովայի, ինչպես ինքն է ասում, եւ ի՞նչ, ստացվում է՝ մեզ ընկալում են որպես թշնամի՞»:

«Ես պատասխանատու չեմ Մեդվեդեւի համար: Դուք ասում եք՝ Ռուսաստանը հայտարարեց: Ես էլ եմ Ռուսաստան: Ո՞վ է Մեդվեդեւը: Ի՞նչ ինստիտուտներ ու մեխանիզմներ ունի իրականացնելու այն, ինչ հայտարարում է: Լավ, ասեք թե հայտարարեց, հետո ասում է՝ անմիջապես շարքով կանգնեք ու կատարեք այն, ինչ ես եմ ասում, նա կարողանալո՞ւ է դա անել: Իհարկե, ոչ: Եվ ես չեմ հասկանում, թե ինչու ենք մենք նրան քննարկում, եթե իրավիճակը գոյատեւման առումով սարսափելի է, եւ ոչ միայն Հայաստանում, այլեւ՝ Ռուսաստանում: Այն, ինչ դուք ասում եք Մեդվեդեւի հետ կապված, վկայում է ռուսաստանյան իշխանության լիակատար մոլորվածության ու ֆիասկոյի մասին, որովհետեւ հետխորհրդային տարածքում քաղաքականությունն այնպես է տապալված, անվտանգային այնպիսի ռիսկերով է հղի Ռուսաստանի համար, որ նման բառեր արտասանվում են միայն թուլությունից եւ հուսահատությունից: Եվ ես ցավում եմ երկրիս համար, որովհետեւ ես ռուսական քաղաքակրթության մարդ եմ, որին օտար չէ հայկական կուլտուրան, համենայնդեպս՝ տեխնիկական եւ գիտական առումով»,- ասում է փորձագետը:

Ըստ նրա, Հայաստանը հիմա գտնվում է պոստտրավմատիկ գործոնի ազդեցության տակ, եւ չի կարելի մեղադրել, քննադատել հայերին, որոնք մտահոգ են իրենց ժողովրդի, հողի, մշակույթի ճակատագրով եւ ունեն երբեմն հիստերիկ դրսեւորումներ: «Ես հայ եմ, որին երբեք չի տանջել հայկական իդենտիկությունը, բայց ես նաեւ կարող եմ դուրս գալ դրա փակագծերից ու տեսնել, որ հայ ժողովուրդը եղել է նման իրավիճակներում, դուրս է եկել հրաշալի կերպով, վերականգնվել է, ինչը նույնիսկ զարմանալի է՝ չկա այդպիսի երկրորդ ժողովուրդ: Հայերի ռեակցիան աղետներին տարբերվում է այլ ժողովուրդների ռեակցիայից: 88-ին ստացավ սարսափելի սթրես, թվում էր՝ պետք է մահանա, բայց հաղթեց եւ 94-ին վերցրեց Շուշին, հաղթեց: Իսկ հիմա մենք քննարկում ենք, թե ինչ պետք է անի Հայաստանը, որ Ռուսաստանը փոխի իր քաղաքականությունը: Ոչինչ: Որովհետեւ այն հայերը, որոնք ապրում են Ռուսաստանում, չեն ձեւավորել ինստիտուտներ, նեռառյալ CAP-ը (Հայերի միությունը), որ Ռուսաստանում հասկանան Հայաստանի նշանակությունը որպես բուն Ռուսաստանի անվտանգության հիմնաքարերից մեկը: Սա հայերը պետք է հասցրած լինեին Ռուսաստանի ղեկավարությանը, նա պետք է իմանար այս ճշմարտությունը՝ որպես այբուբեն, պետք է իմանար եւ չգցեր ամբողջ մեղքը Փաշինյանի վրա»:

Կարինե Գեւորգյանը նախկինում բազմիցս զգուշացրել է ՌԴ իշխանություններին, որ կորցնելով Ղարաբաղը, կկորցնեն նաեւ Սիրիան, դիրքերը Մերձավոր եւ Միջին Արեւելքում, հետո կունենան խնդիրներ Սեւ ծովի եւ Ղրիմի հետ կապված՝ այն, ինչն այսօր կատարվում է:

ԴԱՍԸՆԹԱՑԸ ՊԵՏՔ Է ՍԿՍԵՆ ՆԱԽ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՑ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Բարեփոխումների խթանում՝ Հայաստանում ընտրական համակարգերի թափանցիկ եւ ներառական կառավարման նպատակով» (ARTEMIS) ծրագրի շրջանակներում արդարադատության նախարարության կողմից հունիսի 24-ին Տավուշի մարզպետարանում կայացել է ատելության խոսքի կանխարգելմանն ուղղված վերապատրաստման եւ իրազեկման հանդիպում-դասընթաց: Ներկա են եղել մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանների ներկայացուցիչներ, ոստիկանության Իջեւանի եւ Նոյեմբերյանի բաժինների ծառայողներ, հասարակական կազմակերպությունների անդամներ: Հանդիպման ընթացքում հստակեցվել են տարբեր կողմերի դերերն ու պատասխանատվությունները՝ ատելության խոսքի դեպքերի հայտնաբերման, փաստաթղթավորման եւ համապատասխան մարմիններին փոխանցման գործում: Այս նախաձեռնությունը միտված է «հանրային միջավայրում համերաշխության ապահովմանը»: Սակայն արդարադատության նախարարությունը պետք է առաջնահերթ նման դասընթաց անցկացնի ընդդիմադիրների նկատմամբ մշտապես ատելության խոսք եւ սպառնալիքներ հնչեցնող վարչապետ Փաշինյանի, բարձրաստիճան ՔՊ-ականների, ընդդիմադիրների կաշին քերթել սպառնացող Տիգրան Ավինյանի համար, հետո միայն մարզերում նման դասընթաց անցկացնի:

ԲՀԿ

10 ՕՐ ՊԵՌԱՇԿԻ ԿԵՐԱՆՔ, ՀԻՄԱ ԿԱՐԵԼԻ Է ՇԵՐԵՓՈՎ ՍԵՎ ԻԿՐԱ ԼԱՓԵԼ

Փաշինյանն ամբողջ ռեպրեսիվ ապարատին ֆաս հրաման է տվել ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի, նրա ընտանիքի եւ նրա ունեցվածքի վրա, ինչը մեծ հաճույքով կատարում են իրավապահ կոչվածները: Ծառուկյանի մեղքն այն է, որ համարձակություն է դրսեւորել, առանց Նիկոլի համաձայնության, մասնակցել խորհրդարանական ընտրություններին, ստեղծել իր իշխանությանն ընդդիմացող քաղաքական ուժերի եւ գործիչների դաշինք: Մինչեւ խորհրդարանական ընտրությունները Ծառուկյանի եւ նրա բիզնեսների նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը լոյալ էր, նույնիսկ 2021 թվականին, երբ Ծառուկյանը մասնակցեց խորհրդարանական ընտրություններին, նրա նկատմամբ քաղաքական եւ տնտեսական հետապնդումներ տեղի չունեցան, Փաշինյանն այն ժամանակ իրեն ուժեղ էր զգում եւ չէր վախենում մրցակցությունից: Հիմա, երբ Փաշինյանի իշխանությունը կորցրել է հանրային աջակցությունը, նրան բոլորովին այլ քաղաքական համակարգ է պետք, պետք են կեղծ քաղաքական մրցակիցներ, մրցակիցներ, որոնք զուրկ են ֆինանսական եւ քարոզչական ռեսուրսներից եւ այդ պատճառով վերահսկելի են իր կողմից:

Դեռ ընտրություններից առաջ էր Փաշինյանը խոստացել, որ իր երեք քաղաքական մրցակիցներին՝ Սամվել Կարապետյանին, Ռոբերտ Քոչարյանին եւ Գագիկ Ծառուկյանին այն աստիճան է ունեզրկելու, որ «հացին կակա ասեն»: Ընտրությունների արդյունքները պատճառ դարձան, որ Փաշինյանն ավելի խոր ընկալի՝ անկախ ֆինանսական ռեսուրս ունեցող ուժերը միայն կարող են իրեն մրցակցության հայտ ներկայացնել, որքան էլ ինքը փորձի իր քարոզչամեքենայով լվանալ մարդկանց ուղեղները եւ հարուստներին ներկայացնել որպես իրենց հարստահարողներ, թալանչիներ, քրեաօլիգարխներ: Միեւնույն է, հասարակության համար կան ընտրության ավելի կարեւոր չափորոշիչներ՝ մարդկանց ունեցած կառավարչական հմտությունները, անցյալի փորձը, անձնական հեղինակությունը, միջազգային կապերը եւ հեղինակությունը: Բացի դա, երբ քաղաքական գործիչն ունի սեփական կապիտալ, նա ավելի անկախ է, եւ անհամեմատ ավելի դժվար է նրան վերահսկելը, նրա գործունեությանը խոչընդոտելը: Մինչդեռ իշխանությունը կուզենար ունենալ իր կողմից ֆինանսավորվող եւ իրեն հնազանդորեն ծառայող «ընդդիմադիրների եւ ընդդիմախոսների», որոնց ընդդիմադիր լինելու չափն ինքն է որոշում: Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին մեկ տասնյակից ավելի այդպիսի կեղծ՝ իշխանության կողմից հովանավորվող եւ կառավարվող կուսակցություններ մասնակցեցին, որոնք ավելի շատ գործում էին ընդդիմության դեմ՝ իրենց 1 տոկոսից էլ ցածր վարկանիշով որեւէ վտանգ չներկայացնելով իշխանության համար:

Միանգամից ինչ-որ խախտումներ են հայտնաբերվել Ծառուկյանին պատկանող «Արարատցեմենտ» գործարանում, «Մուլտի վելնես» կենտրոնում, «Շանգրի Լա» խաղատանը… այս ցուցակը երեւի ավելի երկար է: Դատախազությունը Ծառուկյանին անձեռնմխելիությունից զրկելու դիմում է ներկայացրել ԿԸՀ, ինչը նշանակում է, որ Փաշինյանը Ծառուկյանին կալանավորելու հրաման է տվել: Կալանավորելով Ծառուկյանին եւ խախտումներ հայտնաբերելով նրան պատկանող ընկերություններում, նա մի քանի խնդիր է լուծում: Առաջինն իր քաղաքական հակառակորդի չեզոքացումն է, նա կարող է ստիպել Ծառուկյանին՝ հայտարարել կուսակցությունը լուծարելու եւ քաղաքականությամբ չզբաղվելու պարտավորվածության մասին: Կգնա Ծառուկյանը դրան, թե ոչ՝ դժվար է ասել:

Նրան պահելով բանտում, Փաշինյանը կփորձի գործարք առաջարկել. ազատություն՝ սեփականության փոխարեն: Հնարավոր է, որ նույնիսկ գործարք էլ չառաջարկի, ուղղակի վերցնի եւ իրենով անի նրա սեփականությունը, իր հետ փոխկապակցված անձանց անունով ձեւակերպելով Ծառուկյանից խլված սեփականությունները: Ծառուկյանին կալանավորելով եւ ունեզրկելով՝ Փաշինյանը կատարում է իր արտաքին տերերի հանձնարարականը՝ կտրում է, այսպես կոչված, պատերազմի եռագլուխ կուսակցության երեք գլուխներից մեկը: Եռագլուխ կուսակցությունն այն քաղաքական ուժերն էին, որոնք դեմ են Հայաստանի ադրբեջանական եւ թրքական հպատակեցմանը, կողմ են Հայաստանի անկախ եւ ինքնիշխան գոյությանը: Պատահական չէ, որ ԲՀԿ-ին պատգամավորական մանդատներից զրկելը տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Ալիեւի կողմից Հայաստան ուղարկված վերահսկիչի՝ Հիքմեթ Հաջիեւի այցի օրերին, ամենայն հավանականությամբ՝ նրա հրահանգով:

Հասարակության մեջ կան, իհարկե, մարդիկ, ովքեր ուրախանում են Ծառուկյանի դեմ սկսված բռնաճնշումներով, այնպես, ինչպես որոշ վատ հարեւաններ ուրախանում են հարեւանի տանը բռնկված հրդեհով՝ չհասկանալով, որ հարեւանի տան հրդեհը կարող է հասնել իրենց տուն, կամ եթե նույնիսկ չհասնի էլ, դրանից իրենց տունն ավելի լավը չի դառնա: Բայց դա հասարակության շատ չնչին եւ առավել ողորմելի հատվածն է, որոնք այլ ուրախություն չունեն, քան այլոց դժբախտությունը: Մտածել, որ Ծառուկյանի դեմ սկսված արշավն այդ հատվածի կրքերը բավարարելու համար է, այնքան էլ ճիշտ չէ, Փաշինյանն այլեւս կարիք չունի որեւէ մեկին կամ որեւէ հանրային շերտի բնազդները բավարարելու, բռնապետությունը հանրային աջակցության կարիք չունի, նրա միակ հենարանը բռնության մեքենան է եւ դրա անխնա շահագործումը:

Բռնության, ապօրինության եւ ունեզրկման ալիքը չի սահմանափակվելու միայն Ծառուկյանով: Սամվել Կարապետյանը եւ Ռոբերտ Քոչարյանը հաջորդ զոհերն են, թեեւ նրանց եւս դա արդեն վերաբերել է՝ Կարապետյանի մասով ՀԷՑ-ը խլելու տեսքով, Քոչարյանին բազմամիլիոնանոց հաշիվ ներկայացնելով: Բայց դրանով Փաշինյանը չի սահմանափակվելու, նրան եւ նրա շրջապատին ճոխ եւ շվայտ կյանք վայելելու համար պետք է հակառակորդների եւ մրցակիցների ոչնչացում, կապիտալի վերաբաշխում, ինչպեսեւ միլիարդներ՝ տասնյակ, հարյուրավոր: Իսկ երբ դու՝ ինքդ, ընդունակ չես ոչինչ ստեղծել, միակ տարբերակը մնում է ուրիշի ստեղծածը խլելը:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՄՈՌԱՑՎԱԾ ԿԵՐՏՈՂՆԵՐ

Օրերս ականատես դարձանք մայրաքաղաքի փողոցների հերթական անվանափոխությանը: Այս գործընթացն ինքնին արտասովոր երեւույթ չէ. հասարակությունն իրավունք ունի վերադարձնելու մոռացության մատնած անունները եւ դրանով իսկ վերանայելու պատմական հիշողության իր պանթեոնը: Ուստի, առանցքային հարցն այն չէ, թե ում անունն է դառնում քաղաքի կերպարի մաս, այլ այն, թե ի՞նչ իմաստ է դրել նման փոփոխության մեջ Երեւանի ավագանու ՔՊ-ական մեծամասնությունը:

Մայրաքաղաքի կենտրոնական՝ Ա. Ամիրյանի անվան փողոցի վերանվանումը Պապ թագավորի անունով ցույց է տալիս, որ հիշողության քաղաքականության հիմքում ոչ թե անձի գործունեության համակողմանի գնահատականն է, այլ ընթացիկ գաղափարական կոնյունկտուրան:

Պապ թագավորը, իր գահակալության բոլոր հակասություններով հանդերձ, առանձնահատուկ տեղ ունի քրիստոնեական Հայաստանի վաղ պատմության մեջ: Սակայն խնդրահարույց է այն, որ թագավորի անունն արդիականացվում է ոչ թե նրա ժառանգության մասշտաբի շնորհիվ, այլ բացառապես ՔՊ-ի քաղաքականության պրիզմայով: Պապի հակամարտությունը Հայոց աշխարհում հաստատվող Հայ առաքելական եկեղեցու հետ բացահայտորեն համադրվում է ՔՊ-ի առաջնորդի եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկա սուր դիմակայության հետ:

Ակամա հարց է առաջանում. իսկ ինչպե՞ս է հավերժացվել նրանց հիշատակը, որոնց ներդրումը Հայաստանի զարգացման մեջ ոչ թե խորհրդանշական է, այլ՝ միանգամայն կոնկրետ, ստեղծարար եւ ինստիտուցիոնալ: Այդպիսի նշանակալի գործիչների շարքում են, օրինակ, Գրիգոր Հարությունովը եւ Սերգեյ Մերգելյանը:

Գրիգոր Հարությունովը ղեկավարել է Խորհրդային Հայաստանը 1937-53 թվականներին՝ «մեծ տեռորի», պատերազմի, հետպատերազմյան վերականգնման եւ Խորհրդային Հայաստանի արդյունաբերականացման տարիներին: Անհնար է ժխտել, որ հենց Գ. Հարությունովի անձնական ջանքերի շնորհիվ դրվեցին Հայաստանի տնտեսության, քաղաքաշինության, մշակութային-կրթական վերելքի հիմքերը:

Ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը համաշխարհային մակարդակի մաթեմատիկոս էր եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հիմքը հանդիսացող նոր գիտատեխնոլոգիական ենթակառուցվածքի ստեղծողներից, առանց որի դժվար է պատկերացնել 1960-ականներին մեր փոքրիկ հանրապետությունում սկիզբ առած արդիականացումը:

Թեեւ հայերի մի քանի սերունդ վայելում է Գ. Հարությունովի եւ Ս. Մերգելյանի ստեղծարար գործունեության պտուղները, սակայն այս երկու մեծանուն մարդիկ չարժանացան ըստ արժանվույն հասարակական եւ պետական ճանաչման: Յուրաքանչյուրի անունով կոչվել է ֆուտբոլի դաշտի երկարության միմի փողոց՝ կորած երեւանյան բակերի խորքում:

Հենց այստեղ է ի հայտ գալիս մեր ժողովրդի երկու նշանավոր զավակների ճակատագրերի պատմական հեգնանքը. նրանց նշանակալիությունը թույլ չէր տալիս անհետանալ ազգային հիշողությունից, իսկ բարդությունը՝ լիարժեք ճանաչում գտնել պաշտոնական հավերժացման տրամաբանության մեջ: Եվ սա՝ այն պարագայում, երբ երկուսն էլ Հայաստանի համար արել էին ավելին, քան նրանցից շատերը, ովքեր հետագայում հեղինակություն ձեռք բերեցին նրանց ստեղծած ժառանգության հիման վրա:

Անցան տասնամյակներ, փոխվեց մեկ սերունդ, երկու սերունդ, սակայն իշխանավորները շարունակում են նույն ցինիզմով փառքի պատվանդանին բարձրացնել նրանց, որոնց արժեքը որոշվում է ոչ թե վաստակի մեծությամբ, այլ՝ քաղաքական պահի թելադրանքով:

Տեղանունները հասարակության հասունության եւ բարոյական անաղարտության ցուցիչներն են, հավաքական հիշողության առարկայացման ձեւերը, որոնց միջոցով ամրագրվում են տվյալ սերնդի արժեքային եւ պատմական առաջնահերթությունները: Յուրաքանչյուր անվանակոչում ընտրություն է եւ պատասխան այն հարցին, թե ինչ ենք հաղորդում աճող սերնդին, ինչպես ենք գնահատում հեռացող սերնդի վաստակը եւ ինչ ենք ցանկանում պահպանել հնարավոր երկար ժամանակի կտրվածքով:

Եթե տեղանունների ընտրության սկզբունքները դառնում են նեղ կուսակցական մանիպուլյացիայի գործիք, ապա դա վկայում է պատմական հիշողությունը դիտավորությամբ խեղաթյուրելու, տաղանդավոր ու եռանդուն մարդկանց նվիրումն ու անձնազոհությունը անցողիկ խորհրդանիշներից տարբերակելու չկամության մասին: Վստահ եմ՝ կանցնի եւս որոշ ժամանակ, եւ Հայաստանի հանրային հիշողությունը կձեւավորվի ոչ թե քաղաքական նպատակահարմարության գռեհիկ տրամաբանությամբ, այլ՝ երկրին մատուցված ծառայության գիտակցմամբ:

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԽ եւ ԱԺ պատգամավոր (1990-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ՈՉ ՄԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԵՐԿԱՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ՝ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է Ախթալայի Սուրբ Աստվածածին վանքի հոգեւոր հովիվ **Տեր Հեթում քահանա Թարվերդյանը**:*

- Հունիսի 18-19-ին Օրդուբադում՝ «Արեւմտյան Ադրբեջանի ժառանգությունը. վերադարձ պատմական արմատներին» խորագրով փառատոն էր՝ Հայաստանի քարտեզի ներքո, որը Բաքուն համարում է «Արեւմտյան Ադրբեջան»:

- Պատմության քաղաքականացումը նոր երեւույթ չէ: Բոլոր ազգերը տարբեր ժամանակներում փորձել են պատմությունը ծառայեցնել ներկայի քաղաքական նպատակներին: Սակայն երբ պատմական հիշողությունը վերածվում է տարածքային պահանջատիրության գործիքի, այն դադարում է լինել գիտություն եւ դառնում է քաղտեխնոլոգիա: «Արեւմտյան Ադրբեջանի» գաղափարը հենց այդպիսի երեւույթ է: Այն ուղղված է ոչ թե անցյալի ուսումնասիրությանը, այլ՝ ապագայի քաղաքական վերաձեւակերպմանը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ կայուն խաղաղություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ պետությունները հրաժարվում են միմյանց նկատմամբ պատմական իրավունքների անվերջ շղթայից եւ ընդունում են միջազգային իրավունքի ու գործող սահմանների սկզբունքը: Հակառակ պարագայում պատմությունը վերածվում է անվերջ հակամարտության աղբյուրի:

- Օրերս ՄԻԵԴ-ը հրապարակել է քառօրյա պատերազմի գործերով առաջին վճիռը: Արձանագրել է, որ Ադրբեջանը խախտել է հայ զինծառայողի կյանքի իրավունքը եւ խոշտանգումների արգելքը՝ գլխատում, մարմնի պղծում: Ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր է իրական ու երկարաժամկետ խաղաղություն ձեռք բերել մի պետության հետ, որը հպարտանում է հային սպանելով, մասնատելով եւ դա լուսանկարելով:

- Մարդու գլխատումը, մարմնի պղծումը կամ պատերազմի վայրագությունների հերոսացումը ոչ միայն իրավական, այլեւ քաղաքակրթական խնդիր է: Պետությունները կարող են կնքել պայմանագրեր, սակայն ժողովուրդների միջեւ իրական խաղաղությունը կառուցվում է բարոյական հիմքերի վրա: Պատմությունը նաեւ սովորեցնում է, որ նույնիսկ ամենադաժան պատերազմներից հետո թշնամիները կարողացել են խաղաղ գոյակցության ձեւեր գտնել: Եվրոպան երկու համաշխարհային պատերազմներից հետո դրա լավագույն օրինակն է: Հարցն այն չէ, թե արդյոք հնարավո՞ր է խաղաղություն Ադրբեջանի հետ: Հարցն այն է, թե ինչպիսի քաղաքական, իրավական եւ միջազգային երաշխիքներ պետք է ստեղծվեն, որպեսզի խաղաղությունը չդառնա միակողմանի զիջումների կամ ուժի թելադրանքի հետեւանք: Քրիստոնեական տեսանկյունից եւս խաղաղությունը չի նշանակում մոռանալ չարը, այլ նշանակում է արդարության վրա հիմնված հաշտեցում: Առանց ճշմարտության եւ պատասխանատվության, խաղաղությունը մնում է միայն ձեւականություն:

- Ընտրություններից հետո Փաշինյանը կրկին անդրադարձավ եկեղեցիներին. «Իրենց հայաթներում եկեղեցիներ են սարքել, վրան դրել քեռու կնոջ, հորեղբոր կնոջ, սիրուհիների, բաջանաղների անունները: Իսկ մենք քանդված տաճարներ ենք վերականգնում, մեզ մեղադրում են մեր եկեղեցու եւ ինքնության դեմ լինելո՞ւ մեջ»: Անցած կիրակի էլ Նոր Նորքի եկեղեցում մասնակցում էր պատարագի: Նա Եկեղեցու դեմ պայքարից չի հրաժարվել, այս անգամ ի՞նչ ձեւով Եկեղեցու դեմ պայքար կմղի:

- Հայոց Եկեղեցին հազարամյակների ընթացքում եղել է ոչ միայն կրոնական, այլեւ՝ ազգային ինստիտուտ: Ճշմարտություն է նաեւ այն, որ եկեղեցական կյանքում տարբեր ժամանակներում եղել են թերություններ, չարաշահումներ եւ քննադատության արժանի երեւույթներ: Դրանց մասին խոսելն ինքնին հակաեկեղեցականություն չէ: Սակայն պետության ղեկավարի եւ Եկեղեցու հարաբերություններում կարեւոր է սահմանը: Երբ քաղաքական իշխանությունը սկսում է ներխուժել եկեղեցական դաշտ, կամ երբ Եկեղեցին փորձում է ամբողջությամբ մտնել քաղաքական պայքարի մեջ, առաջանում է ինստիտուցիոնալ բախում, որը վնասում է երկուսին էլ: Հետեւաբար, եթե հակադրությունը շարունակվի, ամենայն հավանականությամբ, այն կընթանա ոչ թե իրավական կամ վարչական հարթությունում, այլ հանրային հեղինակությունների պայքարի ձեւով: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ Հայաստանի նման երկրներում ոչ մի իշխանություն չի կարող երկարաժամկետ հաջողություն ունենալ՝ փորձելով պատերազմ հայտարարել ազգային ինքնության հիմնական կրող հաստատություններից մեկին, նաեւ Եկեղեցին չի կարող լիարժեք կատարել իր առաքելությունը՝ վերածվելով քաղաքական ընդդիմության: Փիլիսոփայական առումով պետությունն ու Եկեղեցին տարբեր նպատակներ ունեն. պետությունը կարգավորում է հասարակական կյանքը, Եկեղեցին զբաղվում է մարդու ներքին փոխակերպմամբ: Երբ այդ սահմանները խախտվում են, առաջանում է ոչ թե ներդաշնակություն, այլ՝ փոխադարձ անվստահություն:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍՐԱՆՔ ԸՆԴԱՄԵՆԸ ԱՌԱՋԻՆ ԳԾԻ ՎՐԱ ԿԱՆԳՆԱԾ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՆ

2018-ի հայտնի դեպքերից հետո 1937 թվականի «ուրվականն է շրջում» Հայաստանում: Բայց 2018-ի իշխանափոխության օրերին Նիկոլ Փաշինյանը խոստանում էր սեր, հանդուրժողականություն, համերաշխություն, այդ պատճառով էլ իշխանափոխության գործընթացը նա անվանեց թավշյա: Բացառում էր ցանկացած վենդետա: Չնայած այդ ամենը չեղավ, բայց հիմա ուղղակի տեռորն է մոլեգնում երկրում՝ բերդերում ազատ տեղ չկա, քաղաքական գործիչները կալանավորվում են առանց որեւէ հիմքի: Հիմա Փաշինյանն ուզում է համոզել հայ ժողովրդին, որ մինչ 2026-ը Հայաստանում թավշյա մթնոլորտ է տիրել, եւ ինքը միայն նոր է որոշել վերջ դնել թավիշին եւ «բոմժ սարքել, սատկացնել ու կզացնել» ընդդիմադիր ուժերին: Փաշինյանը, հավանաբար, նույն կոնտեքստում է դիտարկում ամեն օր լուսաբացին, տարբեր ընդդիմադիր գործիչների բնակարաններում խուզարկություններն ու կալանավորումները, սակայն հենց 2018-ից սկսած, հեղափոխական կոչվող այս թիմը զբաղվում է բացառապես ատելություն ու թշնամանք տարածելով, մարդկանց բանտերը լցնելով ու սպառնալով, վիրավորելով, զրպարտելով, երկրի մթնոլորտը թունավորելով ու մարդկանց իրար դեմ տրամադրելով: Ի վերջո, Հայկ Մարությանը նորանկախ պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովրդին սեւերի եւ սպիտակների բաժանեց ու չնայած որ այժմ որպես արդարացում պնդում է, որ սեւերը, 2020 թվականից սկսած, Նիկոլ Փաշինյանի թիմակիցներն են, դրանից հարցի բուն էությունը չի փոխվում: Շատերը Փաշինյանի ղեկավարած ավտորիտար ռեժիմը համեմատում են 1937 թվականի հետ, շատերն էլ այլ պատմական զուգահեռներ են անցկացնում:

Պատմաբան **Հայկ Դեմոյանին** հարցրինք՝ պատմության ո՞ր շրջանն է հիշեցնում ժողովրդավարության անվան տակ մարտնչող այս բռնապետական ռեժիմը, Դեմոյանը «Հրապարակի» հետ զրույցում պատմական էքսկուրս կատարեց՝ ասելով. «Համակարգը, որ մենք ունենք, չեկիստաենիչերական է: Պատրաստ են մասսայաբար կոտորած անել, մարդ սպանելը ենիչերիների համար ոչինչ էր, ավելին՝ դա էր նրանց հիմնական գործառույթը, չեկիստների հայտնի նշանաբանն էլ այն էր, որ եթե մարդ լինի, ապա հոդված անպայման կգտնվի»: Բայց Նիկոլ Փաշինյանը փողոցներում դեռեւս զանգվածաբար չի սպանել մարդկանց՝ նկատեցինք մենք: «Այո, բայց գնում է հենց այդ ուղղությամբ: Նա տանում է Հայաստանը հենց այդ ուղղությամբ: Ամեն օր ինչ-որ ընդդիմադիր ուժերի են ձերբակալում, ապա՝ կալանավորում եւ բաց թողնում: Մեր առօրյան դարձել է բռնոցի-բացթողոցի, դատարաններ, հետաքննություն, սա ճիշտ է, նա սխալ է, խուզարկություններ եւ այլն: Մենք չենք ապրել 1937 թվականին, որպեսզի հստակ նմանությունները մատնանշենք, սակայն հոգեվիճակը շատ նման է: 1937-ի լոգիկայով են գործում: Օրվա իշխանություններն իրականում դրածոներ են, գործիքներ ընդամենը, այ, նրանց իշխանության բերողներն են գործում 1937-ի մտայնություններով, բայց սրանք ընդամենը առաջին գծի վրա կանգնած գործիքներ են»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ով է օգնում եւ ով է խանգարում իրանական ճգնաժամի կարգավորմանը

Իրանա-ամերիկյան հակամարտության կարգավորումն իրենից ներկայացնում է մի «փազլ», որտեղ մի շարք խաղացողներ նպաստում են խաղաղությանը, իսկ մյուսները՝ խանգարում, գրում է Մարիա Ուտկինան «Վեստնիկ Կավկազա» պարբերականում: Ըստ հեղինակի, իրանա-ամերիկյան հակամարտության կարգավորմանը անխոս նպաստում են Պակիստանն ու Կատարը: Նրանք միջնորդական առաքելություն են ստանձնել Վաշինգտոնի եւ Թեհրանի բանակցությունների միջեւ, հանդես եկել որպես բանակցությունների կազմակերպիչներ, որտեղ համաձայնեցվել է վերջնական համաձայնագրի «ճանապարհային քարտեզը»: Բյուրգենշտոկի բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների համատեղ հայտարարությունն էլ արվել է այս երկու երկրների կողմից համատեղ՝ որպես բանակցային միջնորդների: Պարսից ծոցի երկրները հիմնականում հանդես են եկել որպես հակամարտության կարգավորման կողմնակիցներ: Նրանց համար առանձնապես կարեւոր չէր, թե ով է հաղթել: Նրանց համար կարեւոր էր, որ հակամարտության հետագա սրացում չլիներ: Եվ դա հասկանալի էր, եթե հաշվի առնենք, որ Հորմուզի նեղուցի փակ վիճակը հարվածում էր Ծոցի երկրներին՝ անխտիր: Թուրքիան, որպես ռեգիոնալ խաղացող, դիվանագիտական աջակցություն էր ցուցաբերում հակամարտության կարգավորմանը:

Միաժամանակ նաեւ՝ Անկարան բացահայտ հայտարարում էր, որ Իսրայելն ամեն կերպ փորձում է խոչընդոտել հակամարտության կարգավորմանը: Ռուսաստանն ու Չինաստանը, որպես Իրանի դաշնակիցներ, հետեւողականորեն աջակցում էին հակամարտության կարգավորմանը: Ռուսաստանը նաեւ Միացյալ Նահանգների հետ բարձր մակարդակի շփումներում է քննարկել իրանական ճգնաժամի կարգավորումը՝ առնվազն երեք հեռախոսազրույցներում: Պեկինն էլ իր հերթին է ջանքեր գործադրել, որ հակամարտությունը որքան հնարավոր է՝ շուտ դադարեցվի: Ու պատահական չէ, որ նախագահ Թրամփը շնորհակալություն է հայտնել նախագահներ Պուտինին ու Ծինփինին՝ հակամարտության կարգավորման հարցում ունեցած ներդրման համար: Իսրայելը թերեւս ամենակտիվ, չասելու համար՝ միակ երկիրն է, որն ամեն կերպ ձգտել է խոչընդոտել իրանա-ամերիկյան հակամարտության կարգավորմանը: Իսրայելն իր «հաշիվներն» ունի թե՛ Իրանի, թե՛ Իրանի կողմից ռեգիոնում աջակցվող տարատեսակ ուժերի հետ եւ դրա համար էլ ամեն բան անում է, որպեսզի այս հակամարտությունը չկարգավորվի: Հակամարտության կարգավորմանը որոշակիորեն խանգարել են նաեւ ներամերիկյան որոշ ուժեր, որոնք կողմնակից են եղել, որ պատերազմը շարունակվի: Հակամարտության կարգավորմանը դեմ են եղել նաեւ ներիրանական քաղաքական որոշ խմբեր, որոնք հատկապես ծայրահեղ մոտեցումներ ունեն եւ կարծում են, որ կարգավորումն առնվազն դավաճանություն է իրանական ազգային շահերին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Զրուցակիցս 20 տարուց ավելի Լոռու մարզպետարանի մշակույթի, սպորտի բաժինը ղեկավարած **Արամ Ռեւազյանն** է:

- Դուք մշտապես աչքի եք ընկել ըմբոստ կեցվածքով, ժողովրդավարական ընտրությունների եւ արդարության համար մղած պայքարով: Սպասո՞ւմ էիք վերջին ընտրություններում նման արդյունքներ:

- Սպասում էի, որովհետեւ այն, ինչի ականատես եղանք, սպասելի էր, եւ մենք այդ արդյունքը ստանալու ամբողջ «իրավունքը» ձեռք էինք բերել: Ամեն ընտրությունից հետո նույն հարցն է հնչում՝ ինչո՞ւ կրկին անարդար ընտրություններ եղան: Այս անգամ դրան ավելացավ նաեւ արդյունքների նկատմամբ «անհավանական ահավոր» անվստահությունը: Եթե հետ նայենք նախընտրական շրջանին, կտեսնենք այն ամենը, ինչն արդեն սովորական է դարձել՝ վախի մթնոլորտ, սոցիալական նախաձեռնությունների ակտիվացում, տարբեր ծրագրերի ցուցադրական ընդլայնում, վարչական ռեսուրսների կիրառման բազմաթիվ օրինակներ, անօրինական այլ երեւույթներ, որոնք դժվար է անտեսել: Ընտրությունների օրը նույնպես բազմաթիվ հարցեր առաջացան, իսկ արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները շատերի մոտ ավելի շատ հարցեր առաջացրին, քան պատասխաններ տվեցին: Այս պայմաններում այլ արդյունք ակնկալելը միամտություն կլիներ:

- Ինչո՞ւ ընդդիմադիր ուժերին չհաջողվեց կանխել ընտրախախտումները:

- Իմ կարծիքով՝ ոչ միայն չկանխեցին, այլեւ որոշ դեպքերում իրենց վարքով նպաստեցին, որ իշխանությունը հանգիստ իրագործի իր ծրագրերը: Ընդդիմադիր գրեթե յուրաքանչյուր ուժ համոզված էր, որ միայնակ կարող է հաղթահարել խորհրդարան մտնելու շեմը, հետո էլ՝ մեծամասնություն ձեւավորել: Հիշենք Կռիլովի հայտնի առակը՝ կարապը, խեցգետինն ու գայլաձուկը: Երբ բոլորը տարբեր ուղղություններով են քաշում, սայլը տեղից չի շարժվում: Մեզ մոտ նույնիսկ դա չեղավ. սայլը տեղում փլվեց: Չեղավ միասնական պայքար, չեղավ միասնական վերահսկողություն ընտրությունների ընթացքում, չեղավ նաեւ ընտրություններից հետո համակարգված ու համատեղ գործողություն:

- «Ուժեղ Հայաստանի» առաջնորդ Սամվել Կարապետյանը ընդդիմադիր ուժերին միավորվելու կոչ է անում: Ուշացա՞ծ կոչ է դա:

- Ոչ, ոչինչ ուշացած չէ: Այդ կոչն ահազանգ է, զգոնության կոչ է: Այո, դժվար է լինելու ընտրություններից հետո նորից համախմբել մարդկանց, բայց դա անհնար չէ: Ես հիշում եմ նաեւ ձեր հրապարակած հոդվածը, որտեղ առաջարկվում էր ընտրություններից հետո կապված մի շարք հարցերի պարզ ստուգում: Խոսքը մահացած քաղաքացիների տվյալների համադրման, կրկնակի քվեարկությունների հնարավոր դեպքերի ստուգման, զինվորականների մասնակցության ամբողջական ուսումնասիրության եւ մի շարք այլ հարցերի մասին էր: Այսօր նման ստուգումները տեխնիկապես շատ ավելի հեշտ են, քան տարիներ առաջ: Տեխնոլոգիաները կան, մասնագետները կան, հնարավորությունները կան:

- Հարց է առաջանում՝ եթե հնարավոր է ստուգել, ինչո՞ւ չի ստուգվում:

- Դա ինչի՞ մասին է խոսում: Խոսում է կամ անտարբերության, կամ չիմանալու մասին, թե ինչ եւ ինչպես պետք է անել: Ես հակված չեմ մտածելու, թե ընդդիմադիր դաշտում մարդիկ չեն հասկանում, որ նման ստուգումները կարող են շատ լուրջ հարցերի պատասխան տալ: Այսօր արդեն այն ժամանակները չեն, երբ ամիսներ էին պահանջվում՝ հազարավոր էջեր համադրելու համար: Հնարավորությունները կան, գործիքները կան, մասնագետները կան: Բայց գործը չի արվում: Իսկ եթե չի արվում, բնական է, որ մարդկանց մոտ հարցեր են առաջանում: 550 հազարից ավելի քաղաքացի քվե է տվել ընդդիմադիր ուժերին: Այդ մարդկանց պետք է առաջնորդող կամք, պետք է մեկը, որը պատրաստ կլինի առաջ գնալ մինչեւ վերջ: Ինչպես ժամանակին ասվել է՝ Դանկոյի սիրտ է պետք, որ ճանապարհ ցույց տա մարդկանց, եւ այդ ճանապարհին նոր դանկոներ ծնվեն՝ պայքարի մեջ կոփվող, համոզմունք ձեռք բերող մարդիկ:

- Կարծում եք՝ նման պայմաններում այդ պայքարը կարո՞ղ է արդյունք տալ:

- Անպայման: Համոզված եմ, որ կարող է: Երբ կուտակվում են այսքան հարցեր, այսքան կասկածներ, այսքան վիճահարույց դրվագներ, բնական է, որ հասարակության մի զգալի հատված չի բավարարվում պաշտոնական բացատրություններով: Ես չեմ ասում, որ յուրաքանչյուր կասկած արդեն ապացուցված փաստ է: Բայց ասում եմ, որ յուրաքանչյուր կասկած պետք է ստուգվի: Եթե կան վիճարկվող որոշումներ, եթե կան վիճահարույց ընտրատեղամասեր, եթե կան հազարավոր մարդկանց մոտ առաջացած հարցեր, դրանք պետք է ստանան հստակ պատասխաններ: Ինձ համար անհասկանալի է նաեւ, թե ինչու են նման հարցերում առանձին քաղաքական ուժերը միայնակ պայքարում: Եթե խոսքը վերաբերում է ընտրական գործընթացի նկատմամբ վստահությանը, ապա բոլոր ընդդիմադիր ուժերը պետք է գործեն միասին: Սա կուսակցական պահանջ չէ, սա հանրային վստահության խնդիր է:

- Դուք խոսում եք պայքարը շարունակելու մասին, մինչդեռ վարչապետը կոշտ հայտարարություններ է անում ընդդիմության հասցեին ու հոխորտում՝ «դրանց հասցեական ջախջախելու եմ»: Իսկ իր «գծի» հետ անհամաձայն քաղաքացիներին էլ կոչ է անում հեղափոխություն անել եւ փոխել կառավարությունը:

- Այո, հռետորաբանությունը գնալով ավելի կոշտ է դառնում: Փաշինյանն առաջ չագուճ էր պտտեցնում, հիմա անցել է կացնին: Համարձակ պտտում է աջ ու ձախ: Բայց վտանգ կա, որ շատ պտտելուց իր գլուխն էլ կպտտվի, հավասարակշռությունից կընկնի, իսկ թե կացինն իրեն ինչ վնաս կհասցնի, թող ինքը մտածի: Իսկ մենք՝ ընդդիմությանը ձայն տված բազմահազար քաղաքացիներս, իրավունք չունենք վախենալու: Փաշինյանը կոչ է անում հեղափոխություն անել եւ փոխել կառավարությունը: Հիանալի կոչ է: Անհրաժեշտ է հաշվի առնել խորհուրդը: Դա անօրինական ճանապարհ չէ: Ընդդիմությունը պետք է օգտվի իշխանափոխության բոլոր թույլատրելի մեթոդներից ու գործիքներից: Ես կարծում եմ, որ ընդդիմությանը ձայն տված քաղաքացիները չպետք է առաջնորդվեն վախով: Մարդիկ իրենց քաղաքական ընտրությունն են կատարել եւ իրավունք ունեն պահանջելու, որ իրենց ձայնը հարգվի: Մենք մեր երկիրը չենք կարող կառուցել վախի մթնոլորտում: Եթե քաղաքացին համոզված է իր ճշմարտացիության մեջ, եթե գործում է օրենքի շրջանակում, ապա պետք է շարունակի իր պայքարը, իր պահանջատիրությունը, իր մասնակցությունը հանրային կյանքին:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ԲԱԺԻՆ Է ՀԱՍՆՈՒՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

- Հասարակության ուժը հենց համառության մեջ է:

- Իհարկե: Մերն է այս երկիրը, մենք նրա որդիներն ենք: Ամեն օրինական միջոց ու ճանապարհ պիտի օգտագործենք, պիտի կանգնենք միասնության կողքին եւ առաջ շարժվենք: Պատմությունը մեկ անգամ չէ, որ ապացուցել է՝ իշխանությունը կարող է հենվել ուժի վրա, բայց հաղթանակը վերջում բաժին է հասնում նրանց, ովքեր համառորեն չեն հրաժարվում իրենց իրավունքից: Ժողովրդի պայքարը կարող է երկար լինել, եւ եթե այն չի դադարում՝ պարտվել չի կարող:

Գագիկ
ԱՆՏՈՆՅԱՆ

«ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. ԱԿՆԱՍՏԵՍԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Գիրք, որը պատմում է հայ ժողովրդի մի վառ ու պայծառ ժամանակաշրջանի, հերոսական հաղթանակների, ձեռքբերումների, միասնականության մասին: Գիրք, որտեղ չկա դավաճանություն, չկա դավադրություն, այլ ամբողջությամբ նվիրում է, բոլոր բնագավառներում հաղթանակ ու հերոսացում:

Վիկտոր Դալլաքյանը Վազգեն Սարգսյան գործչի մասին պարզ ու գեղեցիկ շարադրանքով է գրել՝ ներկայացրել մեծ հայրենասերի ամենօրյա աշխատանքային առօրյան: Թե, լինելով պաշտպանության նախարար, նա ինչպես է մասնակից եղել երկրի վերակառուցման գործին: Հեղինակը գեղեցիկ շարադրանքով, հումորային մեջբերումներով ներկայացնում է Վազգեն Սարգսյանի մասնակցությամբ հանրօգուտ բոլոր աշխատանքները, հատկապես՝ երկրաշարժի հետեւանքների վերացման ծանր ժամանակաշրջանի նրա նվիրվածությունը: Բացի հզոր բանակի ստեղծումից, զենք ու զինվորի կարեւորումից, նա մշտապես կանգնած է եղել Հայաստանը շենացնողի կողքին:

Վիկտոր Դալլաքյանը, լինելով Վանաձորից ընտրված պատգամավոր, իր ողջ պոտենցիալը ներդնելով քաղաքի եւ շրջանի բարեկարգմանը, նաեւ հետաքրքիր միջադեպեր է հիշում՝ սկսած դպրոցների ուսուցիչներից, որոնք դասավանդել են երկար տարիներ, հայտնի են եղել Վանաձորում եւ հատկապես ինձ համար անցյալի հիշողություններ են արթնացնում, քանի որ նրանք դասավանդել են նաեւ ինձ:

Գրելով այս հուշագիրքը Վ. Սարգսյանի մասին՝ Դալլաքյանը նաեւ բացահայտում է պատգամավոր ժամանակ կատարած իր գործերը: 17-ամյա պատգամավորության ընթացքում 83 օրենքի հեղինակ է դարձել Դալլաքյանը եւ ակտիվ քաղաքական, հասարակական գործունեության ընթացքում մշտապես ունեցել է Վազգեն Սարգսյանի աջակցությունը: Գիրքը, լինելով հուշագրության փայլուն ստեղծագործություն, ներկայացնում է Վ. Սարգսյանի եւ Վ. Դալլաքյանի ողջ համատեղ գործունեությունը, որը, մեծ հաշվով, ծառայել է երկրի բարգավաճմանը եւ զարգացմանը:

Գրքի վերջաբանն այն ցավալի իրադարձություններն են, որ փոխեցին մեր երկրի ընթացքը: Ճակատագրական իրադարձությունները, որոնք կատարվեցին հոկտեմբերի 27-ին՝ Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի ողբերգական մահը, սպանության դրվագները: Մեծ ափսոսանքով ու ցավով գրված տողեր են: Նույնքան ցավով ու ափսոսանքով էլ դրանք ընթերցվում են:

Վ. Դալլաքյանի գիրքը, կարելի է ասել, եւ պատմական է, եւ



հուշագրական փաստերի վավերագրում՝ անցյալ դարի մեր մաքառումների, ձեռքբերումների եւ ցավալի իրադարձությունների մասին:

Կարդացեք եւ հիշեք մեր հերոսներին:

Վալենտինա
ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԵՆԵՖԻՍ

Դե ինչ, սիրելի հայրենակիցներ, ընտրությունների թեմայով ՔՊ-ական «խուժան» համերգն ավարտվեց, եւ այժմ, դասական երաժշտության հնչյունների ներքո, բեմում է անկախ Հայաստանի պատ-

մության մեջ երբեւէ ստեղծված ամենաբարձր դատարանը՝ ՍԴ-ն…

Բայց ո՞նց եմ սիրում ՍԴ դատավորների հանդարտ ընթացքը… Պատմուճանների մեջ՝ ասես սահելիս լինեն պարկետի վրայով… ԱԴ-ի հատակը պարկետ է, չէ՞: Զարմանալի է, ՍԴ-ի ոչ մի մենահամերգ բաց չեմ թողել, սակայն երբեք չեմ եղել այդ շենքում: Սիրում եմ հատկապես հետընտրական թեմաներով համերգները, որոնց ժամանակ ՍԴ-ն փայլում է բոլոր առումներով: Նման համերգների վիրտուոզ կատարող է ՍԴ-ն… Եվ ինչպես են տեքստն ու երաժշտությունը ներդաշնակում միմյանց նրա վերդիկտների մեջ: Շշմելու բան է՝ ի՜նչ Վերդի, ի՜նչ Ամիդա… Դուք ասեք՝ ՀՀ ՍԴ, եւ դրանով ամեն ինչ ասած կլինեք: Ինձ համար, օրինակ, մեր ՍԴ-ից դենն էլ աշխարհ չկա՝ որ վերդիկտը կարդաց՝ էլ վերջ: Էն, որ գնում են, բողոքում են եվրադատարաններ, միջազգային դատարաններ՝ էդ սաղ կապիկություններ են: Ես մեր ՍԴ-ի ֆանատն եմ…

Ահա եւ ըմբոշխնում եմ ՍԴ-ի 2026թ. մենահամերգը: Պիտի որոշեն՝ ով է ճիշտ. Նիկոլն ու Վահագն Հովակիմյանը, թե՞ ընտրությունների արդյունքները վիճարկող ընդդիմությունը: «Հրապարակը» գրել էր, որ ՍԴ-ի մասին օրենքի համաձայն՝ դատարանը կամ պետք է անփոփոխ թողնի ընտրությունների արդյունքների մասին ԿԸՀ որոշումը, կամ անվավեր ճանաչելով այն՝ 3 հնարավոր որոշում կայացնի. առաջին՝ «անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները», երկրորդ՝ «անվավեր ճանաչել եւ սահմանել մանդատների բաշխման կարգը», եւ երրորդ՝ «նշանակել ընտրությունների երկրորդ փուլ»:

Եղբայր, ՍԴ-ն ինչպես որոշի, թող այդպես էլ լինի: Եվ խնդրում եմ՝ ինձ մի հարցրեք, թե դու, լինելով ընդդիմադիր, ինչու ես միանշանակ պնդում, որ ՍԴ-ն կայացնելու է միակ ճիշտ որոշումը: Սիրելիներս, մի մոռացեք, որ ես, ընդդիմադիր լինելուց առաջ, ՀՀ քաղաքացի եմ եւ ուղղակի պարտավոր եմ ոչ միայն ձեւականորեն հարգել ՍԴ որոշումը, այլեւ որպես սրբության սրբոց ընդունել այն: Մնում է միայն, որ ՍԴ-ի առաջ կանգնած Նիկոլն ու Վահագն Հովակիմյանը նույնպես անեն դա: Այլապես ՔՊ-ում եւ ՔՊ-ամերձ շրջանակներում շատ տարածված է դատարանների վճիռները չկատարելու պրակտիկան, ինչն այս դեպքում անթույլատրելի, անգամ արգահատելի վարմունք կլինի նրանց կողմից: Կարճ ասած՝ եթե ՍԴ-ն որոշի անփոփոխ թողնել ընտրությունների մասին ԿԸՀ որոշումը, ես միանշանակ կընդունեմ այդ վերդիկտը եւ կգնամ, ինձ կգցեմ Կիեւյան կամրջից: Ոչ, ոչ, ոչ, ինձ մի համոզեք դա չանել, ես եվրոպական դատարան, միջազգային դատարան դիմողը չեմ: Հենց ՍԴ-ն այդ վճիռը տա, ես կհամարեմ, որ այս գործում գիժը ես եմ եւ ոչ թե Նիկոլն ու Հովակիմյան Վահագնը: Իսկ ես Նիկոլի ու մանավանդ Հովակիմյան Վահագնի մոտ գիժ աշխատելու ոչ մի ցանկություն չունեմ: Կեցցե վերանորոգվող Կիեւյան կամուրջը:

Ես հույս ունեմ, սակայն, որ ՍԴ-ն ընդդիմության ներկայացրած ծանրակշիռ եւ գրեթե անհերքելի փաստերի ճնշման տակ կընդունի հետեւյալ երեք որոշումներից մեկը. առաջին՝ «անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները», երկրորդ՝ «անվավեր ճանաչել եւ սահմանել մանդատների բաշխման կարգը», երրորդ՝ «նշանակել ընտրությունների երկրորդ փուլ»: Նիկոլ Փաշինյան եւ Վահագն Հովակիմյան, դուք պատրաստ եք նույնկերպ, ինչպես ես, ընդունել ՍԴ-ի այս երեք վճիռներից մեկը: Ձեզ եմ հարցնում, խոսեք, մի բան ասեք… Խոսքը ՍԴ-ի վճռի մասին է, ոչ թե «կակոյ նիբուծ» շարքային դատարանի, որի վճիռներն անտեսում եք ամեն քայլափոխի: Ի տարբերություն ինձ՝ դուք եվրադատարան ու միջազգային դատարան դիմելու շանս էլ չունեք: Եվ, ուրեմն, եթե ՍԴ-ն որոշի, որ Հայաստանում ոչ թե արդար ընտրություններ, այլ էշի հարսանիք է տեղի ունեցել, ձեզ այլ ելք չի մնալու, քան ուսապարկերը հավաքելն ու դեպի Կիեւյան կամուրջ շարժվելը:

Ասենք՝ մի տարբերակ էլ կա: Դուք կարող եք համարել, որ դուք գիժ եք ու հանգիստ «գիժ» աշխատել միջազգային հանրության եւ ՀՀ նոր իշխանությունների մոտ:

ՀԳ. *Խնդրում եմ այս հոդվածը չհամարել ճնշում ՍԴ-ի վրա: Քավ լիցի, ես բնավորությամբ խաղաղ մարդ եմ եւ դավադրությունների ոչ մի տեսության չեմ հավատում: Ինձ համար ՍԴ-ն բացարձակ արժեք է, եւ ես այսօր անհանգստանում եմ, որ հանկարծ Նիկոլ Փաշինյանն ու Վահագն Հովակիմյանն իրենց անհարկի ակտիվությամբ վնաս չհասցնեն ՍԴ-ի բարձր հեղինակությանը:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 27.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԿԳՄՍՆ-Ն՝ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզարշավն անցավ պետական եւ վարչական ռեսուրսի մեծ ներգրավմամբ: Իշխող կուսակցության, Նիկոլ Փաշինյանի քարոզարշավին աշխատանքային, դպրոցական դասերի ժամերին մասնակցում էին նաեւ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները: Հաճախ ՔՊ-ի նախընտրական քարոզարշավին տանում էին նաեւ իրենց աշակերտներին, դրա մասին տասնյակ տեսանյութեր կան, հարցազրույցներ: Աշակերտները ՔՊ-ի քարոզարշավի ժամանակ դրոշներ էին ծածանում, տասնյակ հազարավոր երեխաներ Նիկոլ Փաշինյանից Հայաստանի քարտեզի պատկերով կրծքանշաններ էին նվեր ստանում եւ թխվածք՝ կեքսեր:

Խորհրդարանական ընտրություններից բավական ժամանակ է անցել: Հունիսի 15-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Հունիսի 7-ի ընտրությունների առնչությամբ ՔՊ կուսակցության նախընտրական հավաքներ-քարոզչությանը աշխատանքային ժամերին մասնակցելու, այդ հավաքներին իրենց դպրոցի ուսուցիչներին, աշխատողներին, աշակերտներին տանելու համար ՀՀ հանրակրթական քանի՞ դպրոցի տնօրեն է կարգապահական կամ այլ պատասխանատվության ենթարկվել, ովքե՞ր են այդ տնօրենները, նրանք ի՞նչ պատասխանատվության են ենթարկվել»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի պատասխանում նշված է. «ՀՀ ԱԺ հունիսի 7-ի ընտրությունների քարոզարշավի ընթացքում արձանագրվել են քաղաքական տարբեր ուժերի քարոզչության դեպքեր՝ կրթության ոլորտի օրենսդրության խախտումներով, որոնց վերաբերյալ ստացված ահազանգերը ներկայացվել են իրավապահ մարմիններին: Մասնավորապես՝ ԿԳՄՍ նախարարության կողմից արձանագրվել են հետեւյալ դեպքերը. ՀՀ Արագածոտնի մարզի Արագած, Քուչակ եւ Բերքառատ գյուղերի հանրակրթական դպրոցների մանկավարժների եւ սովորողների կողմից արձանագրվել է մասնակցություն քաղաքական քարոզարշավի՝ աշխատանքային ժամերին եւ ուսումնական գործընթացի ընթացքում: Վերոգրյալ դպրոցների տնօրենների նկատմամբ առաջարկվել է կիրառել կարգապահական տույժեր՝ խիստ նկատողություն: ՀՀ Սյունիքի մարզի Արծվանիկի միջնակարգ դպրոցի եւ ՀՀ Արագածոտնի մարզի Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոցի աշակերտների ծնողների կամ աշխատակիցների կողմից տարածվել էին հաղորդագրություններ, որոնք առնչվում էին քաղաքական բնույթի քարոզարշավին մասնակցությանը: ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ գյուղի նախակրթարանի աշխատակիցները աշխատանքային ժամերին մասնակցել են քաղաքական քարոզարշավի: Վայոց ձորի մարզի Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցի անձնակազմը (ուսմասվար) դասերի ընթացքում պարբերաբար արտահայտել է քաղաքական դիրքորոշում: Հայաստանի Ամերիկյան համալսարանում դասախոսների կողմից պարբերաբար իրականացվել է քաղաքական քարոզչություն: Նշված բոլոր դեպքերի վերաբերյալ հաղորդումներ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ դրանք քննարկելու, համապատասխան միջոցներ ձեռնարկելու եւ արդյունքների մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հայտնելու նպատակով: Ուսումնասիրություններն ընթացքի մեջ են»:

Նախընտրական քարոզարշավի ժամանակ օրենսդրության խախտումները կրել են զանգվածային բնույթ, մինչդեռ ԿԳՄՍ նախարարի տեղակալը հայտնել է միայն Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի մի քանի հանրակրթական դպրոցների մանկավարժների, սովորողների մասնակցությամբ օրինախախտումների մասին: Իսկ այլ մարզերում, Երեւանում նման խախտումներ չե՞ն եղել, ԿԳՄՍ նախարարությունն այդ մասին տեղյակ չէ՞: Եվ վստահ չենք, որ պատժվողների շարքում իշխանություններին ծառայություններ մատուցած մանկավարժներն են միայն: Առաջիկայում կփորձենք պարզել՝ գուցե ընդդիմադիր ուժերին համակրող շրջանակներին են միայն պատժել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am